№ 137 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 25

1908

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 25 № 137

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
(36-րդ ՏԱՐԻ)
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ
Հասցէն՝
ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՅՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 6 ՐՈՒԲԼԻ
Ամսական ՄԷԿ րուբլի

Ամերիկա տարեկան	6 դոլլար
Եւրօպա »	30 ֆրանկ
Պարսկաստան »	10 րուբլի
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել	40 կոպ.

Գէորգեան ճեմարանի սան
Աբրահամ Գուլօեանը
ԱՆՎՏԱՆԳ Է
և այժմ գտնվում է Թիֆլիսում:
Նրա բոլոր բարեկամները թող միամտվեն:
(Ե. Հ.) Ա. 2—2

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ՅԵՏՈՅ

IV

Մենք ցոյց տուինք, թէ ինչ պայմաններում գործեց Իզմիրլեանը և ինչ պարագաներում բորբոքվեց հայկական հարցը:

Իզմիրլեանին վիճակված էր դժուար և պատասխանատու դեր կատարել: Նա համարձակ կերպով ձայն բարձրացրեց հայկական բարենորոգումների մասին Թիւրքիայում, գործեց իբրև բարենորոգումների հարցի հեղինակաւոր ներկայացուցիչ, և երբ ստիպված էր իջնել գործունէութեան ասպարէզից՝ նա հեռացաւ, իբրև բաւարարութիւն չը ստացած մի դատախազ իր պահանջած բարենորոգումների վերաբերութեամբ:

Թիւրքիան թղթի վրա մի քանի խոստումներ արեց, հաւատացրեց եւրօպական պետութիւններին և հայերին, որ նրան ժամանակ է հարկաւոր բարենորոգումներ մտցնելու հայաբնակ գաւառներում և որ նա շատ շուտով բաւարարութիւն կը տայ ժողովրդի կարիքների ձայնին:

Առաջարկվում էր սպասել:

Եւ սպասեցին թիւրքահայերը:

Սպասում են մինչև այժմ:

Եւ թիւրքահայերը ոչ միայն ոչ մի հեռաւորագոյն բաւարարութիւն չը ստացան իրանց պահանջների վերաբերութեամբ, այլ և նորանոր աղէտների հանդիպեցին, որոնք վերջնականապէս քայքայեցին գիւղական ժողովրդի տունն ու տեղը և ամբողջ տնտեսութիւնը:

Թիւրքիայի կառավարութիւնը առարկում էր, թէ իր հեղինակութիւնը պահելու և բարձրացնելու համար նա պէտք է գործէ ինքնաբերաբար, տալով բարենորոգումները իբրև իր կամքը և իր շնորհը և ոչ թէ ստիպված հայկական սպառնալիքներից և յեղափոխական շարժումներից:

Որքան էլ անհիմն և նեղահայեաց լինէր այդ տեսակ մի վերաբերմունք դէպի պետական պահանջները, այնուամենայնիւ նա ուշադրութեան առնվեց: Իզմիրլեանից յետոյ Օրմանեանը փորձեց գործել բոլորովին ուրիշ եղանակով՝ համակերպման, բարեխօսութեան, աղերսագրութեան քաղաքականութեամբ:

Եւ աւելի քան տասը տարի է, որ գործադրվում է այդ քաղաքականութիւնը:

Եւ ինչ հետևանք:

Բ. Դուռը շարունակեց իրապէս այնպէս վարվել հայերի հետ, ինչպէս և այն օրերում, երբ հայերը իբր թէ ըմբոստների դերում էին և նրանց պէտք էր պատժել իբրև մեղապարտների: Շարունակվեցին հալածանքները և բռնութիւնները և այն էլ աւելի համարձակ ու անարգել կերպով:

Ժողովրդապետը այլևս չէր գործադրում բողոքի խիստ ձևեր և փայփայում էր այն երազը, թէ կամակատարութեամբ և համակերպութեամբ կարելի է շահել գութ և սէր դէպի հալածված և տագնապած ժողովուրդը:

Թիւրքիան մինչև այսօր էլ շարունակում է պատժել թիւրքահայ ժողովրդին այն մեղքերի համար, որոնք իրան են պատկանում: Նա ստեղծել է դժոխք երկրի մէջ, նա սահմանափակել է մարդկանց կենցաղավարութեան արտայայտութիւնները, կտրել է մարդկանց յարաբերութիւնները միմեանցից, փակել է հայրենի օջախը իր տարագիր զաւակներից և զարմանում է, որ երկիրը չէ խաղաղվում և հանգստանում:

Օրմանեան պատրիարքի քաղաքականութիւնը անշուշտ այն հաշւով էր գծագրված, որ կասկածի և դժգոհութեան տեղիք չը մնայ Բ. Դրան ղեկավարների մօտ հայերի զգացմունքների վերաբերութեամբ. բայց այդ քաղաքականութիւնը չը յարգվեց և չը գնահատվեց այդ տեսակէտով և կարծես թէ այն գաղափարը արմատացրեց սուլթանի և նրա մերձաւորների մէջ, որ հայերի պատրիարքը և հայ «աւագանին» ամենևին համբաշխ չեն հայկական դժգոհութեան ձայներին և ուստի վերջիններս կարող են ճնշվել ամենայն վստահութեամբ իբրև չափազանցված, արհեստական և չարանիւթ գործունէութեան արտայայտութիւններ:

Եւ այդպէս՝ Թիւրքիան շարունակում է Օրմանեանի օրով պատժել հայերին, ամենևին ուշք չը դարձնելով Օրմանեանի զգուշաւոր և համակերպչական քաղաքականութեան: Բ. Դուռը նոյն իսկ չը ցանկացաւ յարգել համակերպչական այդ քաղաքականութիւնը և նայեց նրա վրա՝ իբրև մի հանգամանքի վրա, որ միայն նպաստաւոր էր իր նեղ դիտումների համար:

Թիւրքիան չէ քաշվում և չէ պատկառում Օրմանեանից իր ասպատակութիւնները շարունակելու հայաբնակ տեղերում: Մենք չենք կասկածում, որ այդ հանգամանքը անշուշտ տանջանք և կսկիծ է Օրմանեանի համար, բայց միևնոյն ժամանակ արդեօք դա ցոյց չէ տալիս, որ Օրմանեանը չափազանցութեան հասցրեց իր համակերպչական քաղաքականութիւնը և որ նա պէտք է ժամանակ առ ժամանակ ուժեղ շեշտերով յիշեցնէր Բ. Դրան, թէ ինքը իր բռնած կրաւորական դիրքով ժողովրդական խոշոր վշտերի օրերում առիթ է տալիս հայ ժողովրդին իր յուսահատութեան մէջ տենչանքով մտաբերելու Ներսէս Վարժապետեանի և Մատթէոս Իզմիրլեանի բողոքաւոր քաղաքականութիւնը, երբ հայկական տենչանքի և հեծեծանքի ձայնը հնչում էր հեղինակաւոր խօսքերով և ձևակերպութիւններով:

Եթէ Օրմանեանի համակերպչական քաղաքականութիւնը իր նոյնիսկ մի քանի չափազանցութիւններով վերջ ի վերջոյ մի այնպիսի հաշտութեան կամուրջ գծած լինէր Թիւրքիայի կառավարութեան և հայութեան միջև, որով մայր երկրի ժողովուրդը հնարաւորութիւն ստացած լինէր ոտք դնել ազատ կուլտուրական գործունէութեան հողի վրա, անշուշտ շատ շատերը դրական իմաստով կը գնահատէին այդ քաղաքականութիւնը: Սակայն իրողութիւնն այն է, որ Թիւրքիայի կառավարութիւնը նոյնիսկ տասնամեայ սպասումներից յետոյ բոլորովին անտես է առել հայ ժողովրդի ամենատարրական կենսական պահանջները և ոչ մի հնարաւորութիւն չէ տալիս մարդկանց հանգիստ սրտով անձեռնատու լինելու իրանց առօրեայ կեանքին և ազատվելու անվերջ զըրկանքների և անպատեհութիւնների յուսահատեցնող փանգից:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պօլսի ռուսաց դեսպանութիւնը յունիսի 11-ից յայտնում է Թիւրքական Հայաստանի տառապեալ հայերին ի նպաստ Հանգանակիչ Մասնաժողովին, թէ մայիսի 29-ից իր՝ Հանգանակիչ Մասնաժողովից ստացած 10,000 ֆրանկն անմիջապէս փոխադրել է Վանի ռուսաց փոխ-հիւպատոսին, որպէսզի սա, ըստ նուիրատուների ցանկութեան, բաժանէ այդ շրջանի արկածեալ հայերին: Փոխ-հիւպատոսարանը, յիշեալ գումարը բաժանելուց յետոյ, հաշիւ կը ներկայացնէ Կ. Պօլսի դեսպանութեանը, իսկ սա էլ այդ հաշիւը կուղարկի Հանգանակիչ Մասնաժողովին:

—

Պետերբուրգ, 23 յունիսի

Բարձրագոյն անուանական ուկազով ֆինանսների մինիստրին հրամայված է բաց թողնել ներքին 5 %-ին փոխառութիւն 200 միլիոն գումարի: Փոխառութիւնը մտցվում է պետական պարտքերի գիրքը հետևեալ անունով «1908 թ. երրորդ ներքին հինգ տոկոսային փոխառութիւն»: Տոկոսների ընթացքը սկսվում է 1908 թ. մարտի 1-ից: Հանգուցման տիրաժները կատարվում են ամեն տարի նոյեմբերին, սկսած 1909 թւի նոյեմբեր ամսից: 45 տարվայ ընթացքում հանգցնելու համար կազմվում է առանձին հանգուցման ֆոնդ՝ ամեն տարի յետ գցելով փոխառութեան տոկոսիքը՝ 626,173 րուբլին: Մինչև 1917 թւի մարտի 1-ը այդ յետ գցած գումարը չի աւելացվի, ինչպէս և մինչև այդ ժամանակ չի ձեռնարկվի ոչ յետ գնման, ոչ էլ փոխառութեան բարեփոխման: («Հ. Գ.»)

—

Պետերբուրգ, 23 յունիսի

Յայտարարված է ֆինանսների մինիստրի կարգադրութիւնը, որ փոխառութիւնը կանխիկ դրամի վերածելը (ռէալիզացիա) կատարվում է հասարակական ստորագրութեան միջոցով պետական բանկի բաժանմունքներում և գրասենեակներում, Վօլժսկի-Կամսկի բանկում, Պետերբուրգի միջազգային առևտրական, ռուսական արտաքին առևտրի, Պետերբուրգի գեղջային, ազով-դոնեան, հիւսիսային, ռուս առևտրա-արդիւնաբերական, սիբիրեան առևտրի, Մոսկվայի վաճառականական, ռուս-չինական, Մոսկվայի առևտրական, Մոսկվայի գեղջային, Պետերբուրգի մասնաւոր առևտրական բանկերում և Վարշավայում ու Պետերբուրգում Վավէլբէրգ, Պետերբուրգում և Մոսկվայում Իսկէր և Մոսկվայի ժամհարեան եղբայրների բանկային տներում: («Հ. Գ.»)

—

Իւզովկա, 23 յունիսի

Երէկ հանքից հանեցին կրկին երկու դիակ: Ընդամենը հողին յանձնվեցին 264 բանուորներ. պակասում են դեռ չորսը:

Հիւանդանոցում գտնվող տասնեօթ հիւանդներից մէկը անյուսալի է: Մեծամասնութիւնը թունաւորված է գազով և մինչև այժմ իրան հաշիւ չէ տալիս՝ թէ ինչ պատահեց իր հետ:

Բիկովի գերեզմանատանը, թարմ հողաթումբերի վրա, իշխանութիւնների և ինժեներների ներկայութեամբ, կատարվեց հանդիսաւոր հոգեհանգիստ չորրորդ հանքի զոհված բանուորների յիշատակին: Պսակներ էին դրված Ռուսաստանի հարաւի լեռնահանքատէրերի համագումարի խորհրդի կողմից մի յատուկ պատգամաւորութեան միջոցով, գործարանային ոստիկանութեան պաշտօնեաներից և հազարաւոր բանուորներից: Հոգեհանգիստ կատարվեց նաև Իւզովկայի տաճարում Նովօրոսիյսկի գործարանի բանուորների և ծառայողների ցանկութեամբ: Հանքերում ամենուրեք լիակատար կարգ ու կանոն է, աշխատանքները ընթանում են առանց դադարի: («Հ. Գ.»)

—

Պետերբուրգ, 21 յունիսի

Դումայական ֆինանսական մասնաժողովը ընդունեց այն օրինագիծը, որի համաձայն յօդուտ Փօթի քաղաքի հաստատվում է կէս կոպէկային տուրք նաւահանգստով անցնող ապրանքներին և աւելացվում է մարգանցի իւրաքանչիւր պուդի վճարը: Այս նիստում ներկայ էր և բացատրութիւններ էր տալիս Փօթիի քաղաքագլուխ Ն. Նիկոլաձէն: («Т. Л.»)

—

Պետրօզավօդսկ, 23 յունիսի

Երէկ, երեկոյեան ժամը 7-ի մօտերը, հիւրանոցի բակում, դաշոյնով վիրաւորվեց կրծքից Պետերբուրգի դատաստանական պալատի գլխաւոր նախագահ Կրաշէննիկովը, որ տեղս էր եկել մի քանի քաղաքական գործեր քննելու համար: Չարագործը չը գտնվեց: («Հ. Գ.»)

—

Պետերբուրգ, 21 յունիսի

Պետական Դումայի այսօրվայ նիստում ընդունվեց վերջին ընթերցումով այն օրինագծերը, որոնց համաձայն աւելացվում են դատական վարչութեան պաշտօնեաների ռոճիկները. այսպէս՝ պալատի գլխաւոր նախագահին և դատախազին 1000-ական րուբլի, պալատի պաշտօնեաներին՝ 700-ական րուբլի, նահանգական դատարանի պաշտօնեաներին՝ 600-ական րուբլի, դատարանի դատախազին՝ 700 րուբլի, դատախազի օգնականին՝ 800 րուբլի. բացի դրանից Թիֆլիսում և Բագւում բնակարանի փող 300 րուբլի:

Հաշտարար դատաւորների օգնականների ռոճիկները մնում են նոյնը: («Т. Л.»)

—

Պետերբուրգ, 23 յունիսի

Մինչև 1908 թ. դեկտեմբերի 21-ը երկարեցվում է Բաթումի և Բաթումի շրջանի արտակարգ պահնորդական դրութեան ժամանակը: («Հ. Գ.»)

—

Պետերբուրգ, 22 յունիսի

Դերբենտի 154-րդ հետևակ գնդի գնդապետ Մօլօժանովը նշանակվում է Կարսի զինուորական կառավարիչ:

Քութայիսի նահանգական դատարանի դատախազի օգնական Վասիլևնինը նոյն պաշտօնով տեղափոխվում է Գանձակի նահանգական դատարանը:

Նշանակվում են՝ Սուխումի բաժնի հաշտարար դատաւորի օգնական Պրոխորովիչը և Բաթումի քաղաքային բաժնի հաշտարար դատաւորի օգնական Մատվէեվը՝ երկուսն էլ Քութայիսի նահանգական դատարանի դատախազի օգնականներ. Խօնի հաշտարար գաւառամասի կառավարիչ Տատիեվը՝ Բաչինսկի բաժնի հաշտարար դատաւոր: («К.»)

—

Քրիստիանիա, 23 յունիսի

Յունիսի 13-ին վախճանվեց յայտնի ռոմանիստ Իօնաս Լին: («Հ. Գ.»)

—

Աթէնք, 23 յունիսի

Նոր կաբինէտի կազմը. Տէօտօկիս—մինիստր-նախագահ և զինուորական մինիստր, Բալտացի—արտաքին գործերի մինիստր, Լէվիդէս—ներքին գործերի, Գունարիս—ֆինանսների, Ստաիս—ժողովրդական լուսաւորութեան, Ստեփանու—արդարադատութեան, Էպիրիկոս—ծովային: («Հ. Գ.»)

—

Կ. Պօլիս, 23 յունիսի

Սամօսից յետ կանչվեց երրորդ և վերջին բատալիօնը, որ միւսների հետ ուղարկված էր անկարգութիւնների ժամանակ: Այս զօրքերի փոխարէն Սամօս են եկել 300 մարդ: Ներկայումս տեղական զօրաբանակը բաղկացած է 420 զինուորից: Դեռ մտադրութիւն կայ նոր զօրամասեր ուղարկել: Բոլոր պատերազմական նաւերը, բացառութեամբ «Մարմարիսի», հեռացան կղզուց: («Հ. Գ.»)

—

Աթէնք, 23 յունիսի

Արտաքին գործերի նոր մինիստր Բալտային հաղորդեց օտարազգի պետութիւնների ներկայացուցիչներին, որ նոր կաբինէտը մտադիր չէ փոփոխութիւն մտցնել ընդհանուր քաղաքականութեան մէջ: Տէօտօկիսի կաբինէտի քաղաքականութեան հիմունքները և սկզբունքները կը պահպանվեն, առանձնապէս օտարազգի քաղաքականութեան վերաբերութեամբ: («Հ. Գ.»)

—

Շահը շարունակում է արմատախիլ անել ապստամբութիւնը և կարգ մտցնել Պարսկաստանում: Այդ պատճառով ոչ միայն Թէհրանում, այլ և ամբողջ Պարսկաստանում պատերազմական դրութիւն է յայտարարված: Շնորհված ներումն և դեսպանութիւններին տրված հաւաստիացումները չը խանգարեցին, սակայն, Թէհրանից ստացված տեղեկութիւնների համեմատ, կախաղան բարձրացնել մէջլիսի 12 անդամներին և բանտերում նստած «յեղափոխականներին» ենթարկել խստագոյն տանջանքների: Թէհրանը ամբողջապէս կօզակների ձեռքումն է, որոնք խումբ-խումբ շրջում են քաղաքում, կալանաւորում են կասկածելի անձանց և աշխատում են, որ շուկաները բաց լինին: Գնողներ չը կան և առևտուրը կանգ է առել, սակայն յաճախ է պատահում, որ զինուորները կողոպտում են ապրանքը: «Times» լրագրի թղթակիցը զօրքերի վարմունքը, որոնց թւում և կօզակների ընթացքը, «ամօթալի» է անուանում: Կալանաւորների թիւը կօզակների բանակում ժամ առ ժամ աճում է: Զէնք կրելու և ժողովներին մասնակցելու համար կախաղան են բարձրացնում կամ հրացանազարկ են անում: Լրագիրների բոլոր խմբագրութիւնները աւերված են և լրագիրները բոլորն էլ փակված են, բացի յետադիմականներից: Գաւառներից ստացվող տեղեկութիւնները խիստ գրաքննութեան բովից են անցնում: Զինուորական խորհրդում, շահի նախագահութեամբ, վճռվեց ամրացրած բանակը փոխադրել Թէհրանից հեռու, դէպի Կազրիկազէր: Այնտեղ է գնում շահը ևս Թէհրանից, յանձնելով մայրաքաղաքը կօզակների բրիգադայի հրամանատարին, որը ունի երկու ռմբաձիգ թնդանօթներ: «Times» լրագրի թղթակիցը հաւատացնում է, որ գնդապետ Լեախովը (որին նա գեներալ է անուանում) նշանակված է ոչ միայն զինուորական նահանգապետ, այլ և Թէհրանի կօմենդանտ ամենաընդարձակ լիազօրութիւններով: Թէհրանի գեներալ-նահանգապետ է նշանակված պրինց Մուլայ-Դուլէ:

Շահի պալատում անդադար տեղի են ունենում մինիստրների, մօլլաների և հասարակական գործիչների խորհրդակցութիւններ կարգը վերականգնելու միջոցների մասին: Դէպքերը պատշաճաւոր կերպով լուսաբանելու համար Եւրօպա է ուղարկված շահի ադիւտանտ Համիդ-էս-Սալթանէն, որը նախ գնում է Բուխարէստ և ապա Վիէննա: Նրա «լուսաբանութիւնը» իհարկէ համապատասխանում է հէնց իրան՝ շահի հայեացքներին, որը ամեն բանի մէջ մեղադրում է ժողովրդին և անջումաններին:

Յունիսի 13-ին շահը ընդունեց մայրաքաղաքի պատուաւոր քաղաքացիների և պարլամէնտի մի քանի անվնաս մնացած անդամներին, որոնց նա յայտնեց, որ ներում է բոլոր մեղաւորներին. մինչև անգամ անջումանականներին, սակայն ամբողջ պատասխանատուութիւնը արիւնհեղութեան համար ընկնում է ժողովրդի վրա, որը կրակում էր իր խաղաղ կօզակների վրա: Նա ցաւ է յայտնում անիշխանութեան մասին, սակայն պարտաւոր է պատժել ազգի և թագի թշնամիներին և հանել Պարսկաստանը այն խաւարից, որի մէջ գցել է նրան վերջին սահմանադրական կառավարութիւնը: Լիակատար սահմանադրութեան համար երկիրը չէ հասունացել, սակայն «դրա նման մի բան» նա, այնուամենայնիւ, դիտաւորութիւն ունի պահպանել:—Պատգամաւորութիւնը,—հաղորդում է ապա Լօնդօնի լրագրի թղթակիցը,—շնորհակալու-

Թիւն յայտնեց շահին նրա համար, որ նա կռիւ է մղում անիշխանութեան դէմ և հոգ է տանում երկրի մասին։

Հետաքրքրական է շահի պրոկլամացիան, որի բովանդակութիւնը հաղորդել է «Temps» լրագրին Պարիզի պարսկական դեսպանութիւնը։ Նա համոզված է, որ պարսիկ ազնիւ ժողովուրդը, որին նա սիրում է որպէս իր հարազատ զաւակներին, չի թոյլ տայ, որ պատասխանների մի խմբակ հրամաններ տայ իրան... «Եթէ կառավարութիւնը չը յաղթէ նրանց, կարող են կործանվել և պետութիւնը, և ժողովուրդը, և սահմանադրութիւնը, որը ես կամենում էի այնպէս ամուր հիմքերի վրա դնել։ Որովհետև Պարսկաստանը մինչև օրս էլ սահմանադրական երկիր է, որպէս ես բազմիցս յայտարարել եմ ի լուր աշխարհի։ Երբ կարգը կը վերականգնվի և անկարգութիւններ սկսողները կը պատժվեն, մէջլիսի անդամները կարող են նորից իրանց տեղերը գրաւել և մինչև վերջը հասցնել իրանց վստահացված գործը։ Ինչ վերաբերում է ինձ, ես կրկին անգամ յայտարարում եմ, որ բոլոր ուժս գործ կը դնեմ գոյութիւն ունեցող վարչութեան եղանակը պահպանելու և ցանկալի բարենորոգումները երկրին տալու համար։ Սակայն, կրկնում եմ, խիստ կերպով կը պատժվեն նրանք, որոնք ուզում են քանդել գոյութիւն ունեցող կարգը»։

Շահը համոզված է, որ ազնիւ պարսիկները պատիւ կը համարեն օգնել նրան կատարելու իր պարտքը։

Բնորոշ փաստերից կընդգծենք էլի, որ գերմանական դեսպանութիւնը մերժեց ապաստան տալ մի քանի մոլլաների և քաղաքական գործիչների այն պատրուակով, «որ նրանց կեանքին անմիջական վտանգ չի սպառնում»։ Իսկ անգլիական դեսպանութիւնը շրջապատուած է շահի պահակախմբի կօզակներով, որոնք չեն թոյլ տալիս ներս մտնել ոչ ոքի և հրացանազարկ են անում ապաստան որոնողներին։ Չը նայելով անգլիական դեսպանի եռանդուն բողոքներին, որը յայտնեց թէ «դա մի չը լսված վիրաւորանք է իր երկրի համար», կօզակները, ըստ երևոյթին, հեռացված չեն։

Թաւրիզում տիրում են կատարեալ անիշխանութիւն և քաղաքացիական պատերազմ իր բոլոր սարսափներով։ («Слово»)

ՍՈՎԸ ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ *)

Մշոյ առաջն. փոխանորդը կը գրէ մարտ 2 Թուականաւ. «Անօթութենէ մեռնողներ կը շատնան. այսօր Պաղլու, Տէրքէ-Վանք, Օրնկոց, Սողզոմ և այլ գիւղերէ անօթութենէ մեռնողներու համար զեկուցումներ կըլլան։ Դժբաղդաբար ձմեռը երկարելով արմտեաց գիներն այնքան սղեցին, որ անմատչելի կը մնան աղքատներուն, և սովը գիւղերէ զատ՝ քաղաքին հայ թաղերու թշուառ աղքատներուն համար սոսկալի պատուհաս մը եղած է։ Դիմումներ, լաց և աղաղակ ամեն կողմէ։ Օգնութեան գումար չունինք. կը սպասենք պօսթայէ-պօսթա, և նպաստ չի հասնիր. ոչ սերմնցու, ոչ ոգեպահիկ կայ։ Կը խնդրենք, որ մարդասիրութեամբ ի նկատի առնէք այս յոյժ կենսական խնդիրը և նպաստ հասցնէք փութով»։

Դարձեալ Մշոյ առաջն. փոխանորդն ապրիլ 19 Թուակիր հեռագրով կը ծանուցանէ, թէ ս. Կարապետի Նշանաւոր մենաստանը սերմնցու և նոյնիսկ առօրեայ ուտեստ չունի, և հարկ եղած օգնութիւնը կը խնդրէ։

Վանայ առաջն. տեղապահը և կրօն. ու քաղաքական ժողովները կը գրեն մարտ 17 Թուակիր նամակով. «Ժողովրդեան թշուառութիւնն այս միջոցին աններևակայելի է. ունևորներն իսկ աղքատացան. այսօր հազարաւորներ առօրեայ հացի կարօտը կը զգան, և ամեն օր հարիւրաւորներ առաջնորդարան դիմելով հաց կաղաչեն. Նպաստի գումարներէ դանկ մը իսկ չմնաց. հեռագրով նպաստ կը խնդրենք. հակառակ պարագային պէտք է համոզուիլ, որ հարիւրաւորներ անօթութեան երեսէ պիտի մեռնին։ Բնիկ և գաղթական կարօտելոց թիւը 6000 անձի մօտ է, ուրեք-ուրեք սովամահներ ալ յառաջ եկած են ու պիտի գան մանաւանդ յետ այսօրիկ. անօթութիւնը դէմքերու վրայ ևս յայտնի կերևի. շատերը գերեզմանէ ելած մեռեալներու կը նմանին, ուժասպառ ու քալելու անգամ անկարող»։

Վանայ առաջնորդարանը վերոգրեալ նամակի իմաստով յետագային հեռագրական թախանձագին դիմումներ ըրած է մարտ 23-ին և ապրիլ 22-ին։

Կարնոյ առաջնորդն և կրօն. ու քաղ. ժողովները կը գրեն մարտ 22 Թուականաւ. «Ձմեռն այս տարի սովորականէն աւելի երկարատև եղած է. տնտեսական տագնապը և առևտրական դադարը կը շարունակեն տակաւին. վառելիքի և ուտելեղենաց արժէքը բարձրացած է. հացը մինչև 2—2$^{1}/_{2}$ դահեկանի (1 փութը 7 կօպ.) հասած է, և տակաւ սղելու հակամէտ. սերմնցու չկայ. ապրուստ շահելու միջոցներ ու դիւրութիւն կըպակսին. պահանջատէրեր ամեն բռնութիւն ի գործ կը դնեն և կիներն ու տղաքները գրաւ կառնեն, պահանջելով որ առանց փոխարինի աշխատին. շատ մը արհեստաւորներ այսօր անգործ մնացած են և տան կահ-կարասի վաճառած՝ գիշերները գողտուկ կը դիմեն հաց խնդրելու և 24 ժամ առանց հացի ժամանակ անցնող իրենց մանկիկներուն տանելու համար։ Դպրոցական ուսանողներու կէսն առանց հացի կանցնէ իր օրը մինչև երեկոյ, և թէև մաս մը տղաք իրենց կարող ընկերներու հացէն կը նպաստուին, բայց այդ ալ ոչ տևական կրնայ ըլլալ և ոչ բաւարար խեղճ աղքատ ուսանողներուն, որոնցմէ շատերը լռին արցունքներով կը հասկցնեն իրենց քաղմնեցուցիչ անօթութիւնը։ Կարօտութեան պատճառաւ օտարազգիներու մէջ անձնասպանութեան դէպքեր կը լսուին, և կրնայ վախցուիլ, որ մերայինք ալ ազդուին և այդ կարգի տխուր միջոցներու դիմեն։ Վիճակիս մէջ կարօտելոց թիւը 400 տունէ աւելի կը հաշուուի։ Կը խնդրենք յանուն վիճակայնոց բաւականաչափ նպաստ հասցնել»։

Երզնկայի Քուրու չայ գաւառակի Հասանօվա գիւղի Թաղ. խորհուրդը կը գրէ ապրիլ 29-ին. «Գիւղացի 40 տունը ժողովուրդ իր հողագործական աշխատութեան շնորհիւ կապրէր, սակայն այս տարի հողերը պէտք եղած արդիւնքը չը տալով՝ գիւղացիք սովամահ կորնչելու վիճակի մէջ են։ Անմեղ և փոքրիկ մանուկներ աղիողորմ կուլան և գետին կը փռուին հաց աղաղակելով։ Ծարահատ և յուսակտուր՝ ձեզ կը դիմենք օգնութիւն խնդրելով»։

Շաբին-Կարահիսարի առաջն. փոխանորդը կը գրէ մարտ 21 Թուականաւ. «Քաղաքիս հայ ժողովրդեան ապրուստի միակ աղբիւրը մանուսայագործութիւնն է, և որովհետև այս տարուան տնտեսական տագնապին հետևանօք չկրցաւ գործ հայթայթուիլ գործաւոր դասակարգին, ուստի շատեր օրապահիկէ զուրկ են ու անօթի։ Ի լրումն դժբաղդութեանց՝ արմտեաց սղութեան բերմամբ շատ մը կիներ և 8—9 տարեկան փոքրիկներ փողոցներու մէջ սկսած են մուրալ։ Խեղճ թշուառներ՝ մերկ, բոկոտն և անօթի՝ հե ի հև կը վազեն անցորդներու ետևէն, այլ սակայն դատարկ դառնալ կը պարտաւորուին, որովհետև իրենք չեն միայն մուրացողը, այլ շատեր։ Կը խնդրենք գէթ ժամանակի դարման մը տանելու համար կարօտելոց այս վիճակին՝ անպակաս ըրէք ձեր բարերար օգնութիւնները»։

Սեբաստիոյ Ծանկալ և Պօզարմուտ գիւղերու Թաղ. խորհուրդք կը գրեն ապրիլ 3 Թուականաւ. «Ի Ծանկալ 75 և ի Պօզարմուտ 25 տուներ սերմ չունին. հերկուած պատրաստ արտեր պարապ կը մնան. ինչ պիտի ըլլայ այս հողագործ ժողովրդեան վիճակը, որ արդէն ծանրացած է և խեղճ ժողովուրդը ինչ ընելը չի գիտեր. սարսափահար կը դիտէ առանց վարուցանի մնալու հետևանքը։ Կաղաչենք բոլորովին անճար այս հողագործ ժողովրդեան որքան հնար է շուտ նպաստ հասցնել»։

Տիվրիկի Մրվանայ գիւղի քահանան և Թաղ. խորհուրդը կը գրեն ապրիլ 5 Թուականաւ. «Գիւղիս ժողովուրդը, որ 34 ընտանիքէ կը բաղկանայ, կտոր մը հացի կարօտը կը քաշէ. Նօթութեան պատճառաւ շատեր անկողին ինկան, և երեք օր առաջ անօթութեան զոհ գացին Շահէն Ախիկեան և Աւետիս Լըտտանեան անձերը, որոնց յուղարկաւորութիւնը խոր տրտմութեամբ կատարուեցաւ. միւս հիւանդաց մահն ալ և հիւանդութեան ճարակ զանելն անկասկած է։ Մահուան խուճապի մատնուած այս ժողովրդեան համար նպաստ կը խնդրենք»։

Ակնայ առաջն. փոխանորդը կը գրէ մարտ 24 Թուականաւ. «Ներկայ չոր գարունին մէջ տարապայման սղութեան ատեն՝ քաղաքիս և շրջակայ գիւղերու հացակարօտ աղքատաց խղճալի վիճակը այլ ևս պատմել չէ կարելի։ Անօթութենէ երկու հոգի մեռան Նարվեր գիւղի մէջ, Լիճքի մէջ ևս ծայրայեղ կարօտութիւն կը տիրէ. հողային բերքերը երաշտութենէ փճացած՝ ժողովուրդը առհասարակ հացակարօտ վիճակի մը ենթարկուած է։ Իսկ քաղաքացի ժողովուրդը անցեալ տարի պատահած հրդեհէն մեծապէս հարուածուած՝ տիրող անպայման սղութենէն տակաւ կը ցրուի ու կը բաժնուի։ Պիտի խնդրէինք որ անմիջական և կարևոր նպաստի առաքումով մը մխիթարէիք Ակնայ և գիւղերու կարօտեալները»։

Տիվրիկի Աշուշէն գիւղի քահանան և Թաղ. խորհուրդը կը գրեն մարտ 26 Թուականաւ. «Գիւղացիքս չունինք եզ, սերմ և ուտեստ, և ոչ ալ զգեստեղէն. մեր անկողիններն են խոտեր, զգեստները՝ ցնցոտիներ։ Այսու հանդերձ՝ երջանիկ կըլլայինք, եթէ գէթ պատառ մը չոր հաց ունենայինք. արտերը մնացին անցանք, շահոց դռները՝ փակ. այլ ևս մեզ կը մնայ մաքառիլ մեր ճակատագրին հետ. անօթութենէ անշքապէս զոհ գացողներ շատ ու շատ են։ 550 կարօտելոց համար կը խնդրենք անմիջական նպաստ ղրկել»։

Կիլիկիոյ կաթողիկոս սրբազանը կը գրէ ապրիլ 20 Թուականաւ. «Կը կարծէինք թէ գարնան գալստեամբ կարօտելոց ճգնաժամը վերջ պիտի գտնէ։ Ելբիստանէն և Կիւրինէն առնուած նոր գրութիւններ շատ ահաւոր նկարագիրներ են աղքատ դասակարգին օրհասական տագնապներուն։ Ելբիստանի մէջ հացի կարօտ մանուկները կը խաբեն տաք ջրով, և ողորմելիները արտասուելով կը հարցնեն իրենց ծնողաց, որ եթէ մէկ գաւաթ ալ խմեն՝ պիտի կշտանա՞ն։ Իսկ Կիւրինցիք, որ շալագործութեամբ կը պարապէին, անգործ կը մնան բոլորովին։ Տեղական միջոցներով հոգ տարուած է կարօտելոց, բայց այժմ այդ միջոցները սպառած են, անօթութիւնը զանազան հիւանդութեանց ծնունդ տուած է, և միակ յոյսերնին մնացած է բարերարաց ղրկելիք նպաստին վրայ։ Ելբիստանցւոց և Կիւրինցւոց հետ կը խնդրենք որ նպաստի օգնութեամբ սփոփէք թշուառներու մահակերպ տառապանքն ու կարօտութիւնը»։

Չմշկածագի քաղաք. ժողովը կը գրէ մարտ 15 Թուականաւ. «Արմտեաց սղութեան պատճառաւ շատեր սովամահ ըլլալու մօտեցեր էին այս ձմեռ. հիմա վիճակն աւելի կը վատթարանայ, քանի որ ունևոր կարծուածներու թակոյկներ պարապ լինելով՝ ասկէց վերջ թողունք ուրիշին օգնել, ասոնք անգամ հազիւ պիտի հասնին նոյն իսկ իրենց զաւակաց չորաբեկ հացը ձեռք բերելու։ Ամեն օր գունդագունդ գիւղերէն ու քաղաքէն առաջնորդարան կը դիմեն և սովալլուկ փոքրիկներու համար հաց կաղաչեն. ժանտատենդը սոսկալի համաճարակն ալ տիրեց ժողովրդեան մէջ և անհամեմատ զոհեր տարաւ անօթութեան ու կարօտութեան երեսէն։ Եթէ բարերար նպաստներ չը հասնին, սրտաճմլիկ տեսարաններու հանդիսատեսները պիտի ըլլանք յառաջիկային»։

Մալաթիոյ առաջն. փոխանորդը կը գրէ մարտ 15-ին. «Ղրկուած նպաստէն չնչին բաժին մը ինկաւ կարօտելոց, և շատեր անտես առնուեցան նպաստի անբաւականութեան պատճառաւ։ Տեղւոյս կարօտելոց վիճակը շատ արգահատելի է և անպատմելի։ Կը խնդրենք նոր օգնութեան գումարներ փութացնել»։

Չնքուշէն կը գրեն մարտ 10 Թուականաւ. «300 տուն ժողովուրդ այժմ ցրուած հոս ու հոն՝ թափառաշրջիկ եղած ենք. քաղցած, ծարաւ, մերկ ու անպատսպար վիճակի մը ենթարկուած ենք. մեր բնակավայրերը հրոյ ճարակ եղած՝ միայնակ խրճիթներու մէջ ամառուան տօթէն այրած ու ձմրան ցուրտէն սառած՝ անբուժելի ախտերու և մահաբեր հիւանդութեանց ենթարկուած ենք. ոչ հերկելու գետին, ոչ մշակութիւն, ոչ գործելու արհեստ ունինք. այս դառնագին կենաց չենք կարող հանդուրժել և բոլորովին անճեռ մնալով յուսահատեալ պիտի ստիպուինք Եփրատայ ալեաց մէջ գետահեղձ ի կորուստ մատնուիլ։ Դարման կը խնդրենք թախանձագին»։

---

*) Ահաւասիկ այն դիմումների ամփոփումը, որոնք Թիւրքահայաստանի զանազան կենտրոններից ստացվել են Կ. Պօլսի հայոց պատրիարքարանում և որոնցով այնքան սրտցաւաբար նպաստ է խնդրվում այդ տարաբաղդ ու սովատանջ ժողովրդի տառապանքը դէթ մասամբ մեղմելու համար։ Դիմումների այդ հաւաքածուն, ինչպէս հաղորդել էինք «Մշակի» № 135-ի «Վերջին տեղեկութիւններ» բաժնում, Կ. Պօլսի պատրիարք Օրմանեանը վերջերս ուղարկել է Հանգանակիչ Մասնաժողովին ի տեղեկութիւն։ Խմբ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Համամլի (Ալէքսանդ. գ.), 22 յունիսի

Այսօր, կիրակի, յունիսի 22-ին, Համամլի կայարանում փորձ արվեց վաճառելու այստեղ բացված կաթնատնտեսական և տնայնագործական արհեստանոցների արդիւնքները։

Կայարանի պլատֆօրմի վրա սարքված էր մի պավիլիօն վաճառքի համար։ Թարմ կարագ իւղը ծախվում էր փոքրիկ կէս ֆունտանոց կտորներ, որոնց վրա դրոշմված էր կովի քանդակը։ Հանդէս էին դրված և մի քանի երես-սրբիչներ։

Երկաթուղու գնացքով անցնող ճանապարհորդները շատ հետաքրքրվեցին այդ նորութիւններով և գնեցին հանդէս դրված բոլոր 20 հատ իւղի կտորները, վճարելով 20-ական կօպէկ, և երկու սրբիչ՝ իւրաքանչիւրը 60 կօպ.։

Համամլու կուրսերը առաջ են գնում աջողութեամբ. եկել են աշակերտներ և ուրիշ տեղերից։

Հաշտարար միջնորդը, այցելելով արհեստանոցները, գոհ տրամադրութեամբ մեկնեց գիւղից։ Z.

Ախլաթիան (Սիսիան), 18 յուն.

Հացի բերքը մեզանում այն է, ինչ անցեալ տարի. արտերը գիւղացուն մխիթարական ոչ մի բան չեն խոստանում. շնորհիւ ձմեռվայ երկար տևելուն և ձիւնի ուշ հալվելուն, արտերը չը կարողացան շուտ կենդանութիւն ստանալ. սարոտ տեղերում հացի նշաններ բոլորովին չը կան։

Ամսից աւել է, ինչ անձրև չէ գալիս. եթէ մինչև արտերի հասունանալը մի քանի անգամ անձրև չը գայ, անցեալ տարվայ անգութ սովը պէտք է արմատանայ իր աղէտալի հետևանքներով։

Սիսիանի մի քանի սարային գիւղեր ևս մեկ օրին են, օրինակ՝ Մազրա, Շաղաթ, Ալիլու և Անգեղակոթ գիւղերը, բայց մնացած գիւղերի կանաչները միջակ են։

Կառավարութեան յատկացրած նպաստները, ինչպէս երևում է, գները բարձրանալով քշել տարել են. թէ չէ ո՞ւր է—«անունը կայ, ամանումը չը կայ». էլ ե՞րբ պէտք է իրագործվի այդ առասպելութիւնը։

Սարերը բաւականին խոտաւէտ են, չը տեսնվածի նման։ Դաշտերում ահագին պատռուածքներ են առաջացել. այնպիսի տեղերից է ջրի հոսանքներ առաջացել, որ մարդ երազել անգամ չէր կարող, թէ երբևիցէ այդպիսի տեղերից կարող է ջուր դուրս գալ։

Գիւղում սարսափելի տարածված է գինեմոլութիւնը. առաւօտը լոյսը բացվելուց, մինչև ուշ գիշեր, խանութներում լցված՝ արբեցողութեամբ են պարապւում։

Անցեալ ամիս մեզանում մի տխուր դէպք պատահեց. Աճարոն անունով 24 տարեկան մի երիտասարդ առխ հանելու ժամանակ, որը անցնում է փոքրիկ ժայռի վրայով, փլվում է ժայռը, կլանելով երիտասարդին իր հոսանքների տակ. հաւաք են հանում գիւղացիք, բայց արդէն ուշ է լինում. խեղճին մեռած են հանում փլուածքի տակից։

Գէորգ Գէորգեան

Շուշի, 20 յունիսի

Ցաւալի է, խիստ ցաւալի, երբ հասարակական պաշտօնէութիւնը զէնք ունենալով իրանց ձեռքում, երկար ժամանակ գոյութիւն են ունենում մի հասարակութեան կեանքի մէջ այն տեսակ ապիկար էակներ, որոնց հասցրած վնասները զգալի բնաւորութիւն են ունենում նոյն հասարակութեան համար։ Չը գիտես խղճալ թէ զայրանալ՝ այդօրինակ արարածների տգեղ վարմունքները տեսնելով։

Ամսիս 5-ին Աշոտ եպիսկոպոսը գաղտագողի կերպով հրաւիրում է 1906 թւին ընտրված պատուիրակներին Շուշու թեմական դպրանոցի հոգաբարձական կազմը լրացնելու։ Հոգաբարձուներ, որոնց շնորհիւ խանգարվեց դպրոցական դիսցիպլինան, հոգաբարձուներ, որոնց շնորհիւ ամեն մի խմաստակ առանձնեց ուսուցչական պօրտֆէլ, հոգաբարձուներ, որոնք հանգիստ խղճով կարող են ասել, որ մենք ժողովրդի ընտրվածը չենք, ժողովրդի ներկայացուցիչը չենք... Սակայն ինչ և է։ Հոգաբարձական կազմից (12 հոգուց) միայն 5 հոգի էին գտնվում քաղաքումս, որով կազմելով փոքրամասնութիւն, կառավարում էին դպրոցը, փոխ-նախագահ ունենալով մօտիկ անցեալում պարբերական թերթերում մերկացված և մինչև այժմ էլ այդ մասը տանող Եղիշէ քահանայ Թարխանեանին, իսկ գանձապահ պ. Ասլան Աթաբեգեանին, որ դպրոցական դրամարկղից վերցնելով 6000 րուբլի, մինչև այժմ չէ վերադարձնում։ Այդ բոլորից յետոյ արդեօք ի՞նչ իրաւունքով և ի՞նչ օրէնքի հիման վրա է առաջնորդ Աշոտը 1906 թւի պատուիրակների միջոցով լրացնում հոգաբարձական կազմը։ Եթէ Աշոտ եպիսկոպոսը հիմնվում է Փոխարքայի հրատարակած օրէնքների 4-րդ կէտի վրա, պէտք է նկատել, որ այդ առիթով շատ անորոշ բացատրութիւն է տալիս յիշեալ կէտը։ Բայց եթէ մի րոպէ անգամ ենթադրելու լինենք, որ այդ իրաւունքը կայ, կամ վերապահված է թեմական առաջնորդներին, այնուամենայնիւ 1906 թւին ընտրված են եղել 19 պատուիրակներ, որոնցից քաղաքումս մնացել են 11 հոգի։ Այդ 11 պատուիրակներից մասնակցել են ընտրութեան ոչ թէ 11 հոգի, այլ 13 հոգի 14 ձայնով. պարզ է, որ մնացած պատուիրակները իրանց ձայները յանձնել են ուրիշներին՝ հոգաբարձուներ ընտրելու։ Այստեղ ևս Աշոտ եպիսկոպոսը երևի իր իրաւունքն է համարել անելու այդպիսի մի ապօրինի քայլ։

Ո՞վ գիտէ, գուցէ այդ քայլով Աշոտ եպիսկոպոսը կամեցել է գովասանաց դափնիներ ձեռք բերել իւրատեսակ մի քանի ցեցերից...

Հրաւիրում ենք Շուշու քաղաքացիներին, ում համար թանգ է մատաղ սերնդի կրթական գործը, սթափվել և, հետաքրքրվելով դպրոցական գործով, պաշտպանել իր ոտնակոխ եղած իրաւունքները, թոյլ չը տալ որ մի վիճակաւոր իր հակաժողովրդական աններելի քայլերով խաւար սփռէ իր անկարող խնամքին յանձնված հաստատութիւնների վրա։

Ղարաբաղի թեմի աւերածութիւնը ընդհանրապէս Աշոտ եպ. օրօք այն աստիճանի է հասել, որ լուրջ միջոցներ են հարկաւոր նրանց դէմն առնելու համար։ Անտարբերութիւնը աւելի քան վնասակար արդիւնք կարող է ունենալ։

⁂

Դիլիջան, 22 յունիսի

Դիլիջան ամարանոց եկողների թիւը այս տարի անցած տարիների հետ համեմատած շատ մեծ է։ Այդ հանգամանքը առիթ դարձաւ ամարանոցային բնակարանների վարձը այստեղ չը տեսնված գների հասցնելուն, և պատահեցին նոյն իսկ բնակարաններ, որոնք կրկնակի գներով վարձով տրվեցին։

Ամարանոց եկողներից այդ տեսակ օգտվելը մենք համարում ենք շատ վնասակար դիլիջանցիների համար, որովհետև Դիլիջան ամարանոց եկողները, ի նկատի ունենալով բնակարանավարձի այդ աստիճանի թանգութիւնը, կը դադարեն այլ ևս ամառներն այստեղ գալուց։ Ճիշտ է, Դիլիջանն ունի բնական գեղեցկութիւններ և սիրուն ու առողջարար կլիմա, սակայն ամարանոցային յատուկ արհեստական յարմարութիւններ գրեթէ չունի։ Շահագործել Դիլիջանի բնական առաւելութիւնները առանց արհեստականի մասին մտածելու և ի նկատի առնելու ամարանոց եկողներին՝ մենք գտնում ենք աննպատակ և շատ վնասակար դիլիջանցիների համար։

Մեր երկրի սարալանջերին ընկած ամեն մի գիւղում դուք կը գտնէք առաւել կամ նուազ չափով առողջարար ջուր և մաքուր ու զով օդ. և եթէ այդ տեղերը ամարանոց գնացողներ չը կան, դրա պատճառը արհեստական անյարմարութիւններն են։

Յունիսի 15-ին բացվեց հասարակական ռոտոնդան։ Հէնց այդ հիմնարկութիւնը դեռ շատ հեռու է զուարճութիւն պատճառող հիմնարկութիւն կոչվելուց։ Օրինակ՝ հէնց այն, որ այդտեղ ստացվում է միմիայն եռեք օրաթերթ, որը կարող է ստանալ և մի մասնաւոր մարդ։ Այդտեղ երեխաների խաղերի, զբօսանքի և զուարճութեան համար ոչինչ չը կայ, մինչդեռ իր կողքին կպած զինւորական ռոտոնդայում շատ բան է արված դրա համար։ Լուսաւորութեան մասին խօսելն իսկ աւելորդ է։

Երէկ, ամսիս 21-ին, հայ դերասանական խմբի անդամներ տիկ. Փառանձէմ և պ. Միրզաեան սիրողների մասնակցութեամբ տուեցին մի ներկայացում։ Խաղացվեց՝ «Լռութիւն» և «Նախ մեռան՝ յետոյ ամուսնացան»։ Ներկայացումը խաղի և մուտքի կողմից գոհացուցիչ էր։

Կ. Թադէոսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Կովկասի Փոխարքայի եզրակացութեանն է ուղարկված արդարադատութեան մինիստրութեան ընդարձակ նախագիծը՝ կայսրութեան, ի թիւս որի և Կովկասի, դատական հաստատութիւնների կազմը մեծացնելու և նրանց ռոճիկները աւելացնելու մասին։ Կովկասի ընդհանուր դատաստանական հաստատութիւններից մտադրութիւն կայ մեծացնել Բագուի և առանձնապէս Եկատերինօդարի նահանգական դատարանի կազմը, իսկ հաշտարար դատական հաստատութիւնների մէջ—հաստատել մի քանի նոր դատական-հաշտարար և քննիչ գաւառամասեր Բաթումի նահանգական դատարանի շրջանում և ուժեղացնել հաշտարար արդարադատութիւնը Կուբանի շրջանի Տեմրիւկի բաժնում։

◆ Կովկասի Փոխարքայի Պետերբուրգ գնալը յետաձգված է անորոշ ժամանակով։

◆ Վերջին օրերս Թիֆլիս են բերում շրջակայքից, համարեա ամեն օր, կատաղած շան կծածների։ Պաստերեան պատուաստանոցում վերջին օրերս սրսկումներ են արել 30 այդպիսի մարդկանց։

◆ Սոյն օրերս իր աշխատանքները կաւարտէ կովկասեան ջերմապահական կայարանը քննող յանձնաժողովը, որ բաղկացած է երկրագործութեան գլխաւոր կառավարչից ուղարկված պրօֆէսոր Շչէկլանովցևից, Ռուսաստանի հարաւի ջերմապահութեան մասնագէտ Բերդենսօնից, Թիֆլիսի արքունական պալատի գլխաւոր հաշուապահ Պօպօվից (ներկայացուցիչ Կովկասի Փոխարքայի) և Թիֆլիսի կօնտրօլնի պալատի գլխաւոր վերահսկիչ գ. խ. Դրիգօրեանից (ներկայացուցիչ կօնտրօլնի վարչութեան)։ Այդ յանձնաժողովի անդամ Բերդենսօնը մի ուրիշ յատուկ յանձնարարութիւն էլ ունի—մօտիկից ծանօթանալ Թիֆլիսի այգեգործական դպրոցի դրութեան հետ։ Ինչպէս տեղեկացել է «Кавказъ» լրագիրը, գիւղատնտեսական ընկերութեան մէջ յիշեալ յանձնաժողովը վերաքննութիւն չի կատարի։

◆ Յունիսի 22 ին քաղաքումս տեղի ունեցան համատարած խուզարկութիւններ։ Ձերբակալված են շատ անցաթուղթ չունեցողներ։

◆ Յունիսի 23-ի գիշերը, Թիֆլիսում, մօտ ժամը 2$^{1}/_{2}$-ին, Վօկզալնայա փողոցում, Գունդիեվի տանը հրդեհ ծագեց, որ շուտով ընդարձակ չափեր ընդունեց։ Տան մէջ գտնվում է «Боржомъ» հիւրանոցը, որ լի էր կեցողներով։ Շուտով եկաւ հրդեհաշէջների խումբը և սկսեց կրակը հանգցնել։ Ներսից լսվում էին երեխաների և կանանց սիրտ մորմոքող աղաղակները և օգնութեան ձայներ։ Տունը ապահովագրված է «Россія» ընկերութեան մէջ 50,000 րուբլով։ Վնասներն առայժմ պարզված չեն։ Կրակը հանգցնելու ժամանակ կտրվեց էլեկտրաքարշի թելը, որի հետ միանում են անդրկ. երկ. հեռախօսի և հեռագրի թելերը, այնպէս որ մինչև միւս օրվայ առաւօտեան ժամը 8-ը երկաթուղու հեռախօսը և հեռագիրը չէին գործում։

◆ Քաղաքային ջրամբարներից քաղաքի զանազան ջրանցքները բաց թողած ջրի իսկական քանակը որոշելու համար՝ ջրամբարների խողովակների մօտ դրված են մեծ ջրաչափներ։ Մինչև օրս քաղաքի գործածած ջրի քանակը որոշվում էր միայն Աւճալայում։

◆ Կօջօրում բացված է պօստ-հեռագրական բաժանմունք։

◆ Նուխուց գրում են, որ յայտնի աւազակ Բախիշի խումբը ոչնչացված է։ Գաւառական ոստիկանութեան, մի քանի օր խմբին հալածելուց յետոյ, աջողվել է վերջապէս հրացանաձգութեան բռնվել նրա հետ, որի ժամանակ սպանվել են Բախիշը և նրա հինգ ընկերները։

◆ Բօրչալուի գաւառից գրում են, որ յունիսի 11-ին, երեկ. ժամը 10-ին, Արշակ Տէր-Յովհաննիսեանի աղացագործարանը (գտնվում է Շահալի կայարանում) եկան Բօրչալուի գաւառի անտառներում թագընվող յայտնի աւազակներ Վէքիլիշվը և Զուբենօվը՝ մի քանի ուրիշ անյայտ մարդկանց հետ։ Այդ րոպէին գրասենեակում գտնվում էին մի քանի ծառայողներ և Տէր-Յովհաննիսեանի 22-ամեայ որդի Գարեգինը։ Աւազակները յայտնելով ներկայ եղողներին, որ նրանք եկել են գերելու Գարեգինին, հրամայեցին հաղորդել նրա հօրը, որ նրանք փրկանք են պահանջում։ Ապա աւազակները «գերված» Գարեգինի հետ հեռացան։ Նրանց հեռանալուց յետոյ եղածի մասին խմացում տրվեց Լօռու պրիստաւին, որ գտնվում էր մօտակայ գիւղերից մէկում, բայց որոնումը ոչ մի հետեւանք չունեցաւ։ Նոյն օրը եղածի մասին յայտնեցին հօրը, որ գործերով եկել էր Թիֆլիս։ Յունիսի 12-ին նա մեկնեց Շահալի։ Նա չը գիտէր ինչ անել, ինչպէս գտնել աւազակներին, որպէսզի բանակցութիւնների մէջ մտնէր նրանց հետ։ Վերջապէս նա վճռեց որոնել նրանց Բօրչալուի անտառներում։ Բաւական երկար որոնելուց յետոյ, նրան յաջողվեց գտնել նրանց տեղը։ Աւազակները պահանջեցին փրկանք, հակառակ դէպքում սպառնացին սպանել որդուն։ Սկսվեց սակարկութիւն. վերջ ի վերջոյ Տէր-Յովհաննիսեանին աջողվեց աւազակների պահանջած 8000 րուբլին իջեցնել 2000 րուբլու։ Վճարելով այդ գումարը, հայրը ազատեց իր որդուն յունիսի 20-ին։ Ազատելով Գարեգինին, աւազակներն ասացին. «Տես, որպէս զի բոլորի մասին տպվի լրագիրներում»։ Ինչպէս յայտնի է, այս յանդուգն աւազակները մահապատիժ են դառել ամբողջ Լօռու և Բօրչալուի բնակիչների համար։ Սրանք էին, որ անցեալ տարի գերեցին հարուստ կալուածատիրուհի Բալանթարեանին և մեծ փրկանքով բաց թողին։ Տեղական իշխանութիւնը, ինչպէս երևում է, անզօր է ձերբակալելու այդ մարդ-գազաններին։

◆ Պ. Յովհաննէս Զալեան խնդրում է մեզ յայտնել պ. պ. թարգմանիչներին և հրատարակիչներին, որ նա արդէն թարգմանել է Ֆր. Վեդեկինդի «Գարնան արթնանալը» պիէսան։ Այն անձինք, որոնք կը բարեհաճեն հրատարակել, թող դիմեն այս հասցէով. Тифлисъ, Песковская ул., 44, Оганесу Залянъ.

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

Նիստ յունիսի 23-ի

Նիստը բացվում է առ. ժամը 11 և 16 րօպէին։ Նախագահում է իշխ. Վոլկոնսկին։ Կարդացվում է օրակարգը։

Նախագահը յայտնում է Պետական Դումայի անդամ Պետրօվօ-Սօլօվօվօյի մահը։

Դուման հանգուցեալի յիշատակը յարգում է յոտնկայս։

Խմբագրական մասնաժողովի զեկուցման համաձայն ընդունվում և յանձնվում է Պետական Խորհրդին խուզարկու մասը կազմակերպելու օրինագիծը։

Ընդունվում են մէկը միւսի ետևից հետևեալ օրինագծերը.

1) 1908 թ. բանտային նախահաշւի գումարներից մի քանիսը կրկնապատկելու օրինագիծը.

2) Ասխաբադի բանտը բանտային վարչութեանը յանձնելու օրինագիծը.

3) Տէրէքի և Կուբանի շրջանների լեռնականների դասային իրաւունքները քննելու համար մի մասնաժողով ընտրելու օրինագիծը։

Զեկուցվում է բանտային շինարարական պէտքերի գումարները շատացնելու օրինագիծը։

Կուզնեցօվը յայտնում է, որ սօցիալ-դեմօկրատական ֆրակցիան ձայն կը տայ բանտեր կառուցանելու գումարների դէմ, որովհետև տգէտ ժողովուրդը մեռնում է աղքատութեան մէջ, իսկ մենք լայնացնում ենք բանտերը և հէնց դրանով միայն աւելացնում ենք յանցանքների շարքերը։

Գլխաւոր բանտային կառավարչի բացատրութիւնից յետոյ օրինագիծը ընդունվում է։ Զեկուցվում է այն օրինագիծը, որով առաջարկվում է երկաթուղային ծախքերի նախահաշւում մտցնել 1908 թ. համար 20 միլիօն րուբլի երկաթուղիների շահագործման վրա ծախսելու։

Օրինագիծն ընդունվում է։

Զեկուցվում է այն օրինագիծը, որով առաջարկվում է 1,500,000 րուբլի յատկացնել ծովային մինիստրութեան նախահաշւից անկախ՝ Օբուխովսկի նաւաշինարանի համար գումարներ տալու։

Վիճաբանութիւններից յետոյ օրինագիծը ընդունվում է Ցիտովիչի հետևեալ բանաձևով. «Ցանկութիւն յայտնելով, որպէսզի աշնան մօտերը մինիստրութիւնը Դումային ներկայացնէ իր կարծիքները և գումարների հաշիւը Օբուխովսկի գործարանը վերանորոգելու վերաբերութեամբ, Դուման անցնում է օրինագծի յօդուածային քննութեան»։

Առանց վիճաբանութիւնների ընդունվում են՝ 1200 րուբլի յատկացնել ամեն տարի Կ. Պօլսի ռուս հնագիտական ինստիտուտի երկու գիտնական քարտուղարներին, ուսուցչական ինստիտուտ հաստատել Եարօսլաւում և այլն։

Ընդմիջումից յետոյ նախագահում է բարօն Մէյենդօրֆը։

Զեկուցվում է արտակարգ մի գումար յատկացնելու մասին Սև-ծովի նաւատորմի և նաւահանգիստների անյետաձգելի պէտքերի համար։

Օրինագիծն ընդունվում է վերջ ի վերջոյ հետևեալ խմբագրութեամբ. «Յատկացնել 1908 թ. Սև-ծովի նաւատորմի և նաւահանգիստների անյետաձգելի պէտքերի համար 4,175,690 րուբլի, վերցնելով այս գումարը պետական գանձարանի ընդհանուր միջոցներից։

Նիստը փակվեց ժամը 10 և 48 րօպէին։

(«Հ. Գ.»)

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 21 յունիսի

«Մշակի № 130-ում Թադ. Աւդալբէգեան, իր խոստման համաձայն, ինչպէս հեռագրում յիշել էր, տալիս է Իգդիրի դպրոցի դէպքերի նկարագիրը։ Ամենևին մտադրութիւն չունենալով այդ պարոնի հետ պօլեմիկա մղելու, թողնում եմ նրա յօդուածը մի կողմ, իսկ ընթերցողներին, իրողութեան հետ ծանօթացնելու համար, հետևեալ փաստացի տեղեկութիւնները կը տամ, առանց բացագանչութիւնների և ընդգծումների. ընթերցողը թող ինքը սարը դատի և ինքն էլ որոշ եզրակացութեան գայ։

Իգդիրի ծխական դպրոցում ուսուցչական կազմը այս տարի 11 հոգուց էր բաղկացած։ Մինչ միւս տարիները զանազան աննպաստ պայմանների շնորհիւ ուսումն սկսվել էր դեկտեմբերին կամ նոյեմբերին, մեր օրօք սկսվեց սեպտ. 10-ից և կանոնաւոր տարվեց մինչև մայիսի 20-ը, մինչև այն օրը, երբ սրտացաւ մարդկանց շնորհիւ տեղի ունեցաւ աշակերտական և ամբոխային կազմակերպված ցոյցը։ Մեր դպրոցական կեանքը որոշ չափով վրդովել է միայն ուսուցիչ պ. Առաքել Առաքելեան, մանկավարժական ժողովներում յարուցանելով անտեղի աղմուկներ, սկզբունքային հակառակութիւն ցոյց տալով ծնողական ժողովներ գումարելուն, պահանջելով տարվայ ընթացքում թւանշանների գործածութիւն, գլուխ պատռելով՝ ապացուցանելու որ ա. և բ. բաժանմունքներում երեխաների ձեռքը կրօնի դասագիրք տրվի. նա հակառակ է, որ ծանօթանալու համար դաստիարակները այցելեն իրանց սաների տները։ «Դիտաւորեալ և գիտակցօրէն» (30-րդ արձ.) զանցառու է գտնվում փորձնական դաս չը տալով, որպէսզի մանկավարժական ժողովի զանցառութիւնները ցոյց տայ, և երկու ժողով զբաղեցնում է մեզ, բայց երբ տեսնում է, որ ժողովը միաձայն փաստերով հերքում է իր մեղադրանքները, անպատւելով ամբողջ ժողովին՝ «վայրենու ուղեղին միայն յատուկ աբսուրդի» («Մշակ» № 130) է դիմում, այն է՝ հեռանում է նիստից, սպառնալով որ գրաւոր կը տայ ժողովներին չը մասնակցելու հրաժարականը (31-րդ արձ.)։ Սակայն գալիս է յաջորդ ժողովին, հակառակ իր խոստման, առանց հակաճառութեան ստորագրում այն արձանագրութեան տակ, ուր ասված է, որ նա որոշ խնդիրների մարմնացումն է և նպատակ է դրել վարկաբեկել դպրոցն ու ուսուցչական կազմը։ 36-րդ ժողովում, երբ ես, որպէս նախագահ, նրա անտեղի միջամտութիւններին վերջ տալու համար նկատեցի, թէ «պ. Առաքել, ձայն ստացէք և այնպէս խօսեցէք», նա ինձ վիրաւորեց «կեղտոտութիւն և ապօրինութիւն» համարելով իմ վարմունքը (որ ես նրան չեմ ասել «զարշելի և ճահիճ ես դու», այդ հերքեցին խառն ժողովում նրան պաշտպանող ուսուցիչները, որոնք իրանց բանաձևի մէջ այդ խօսքերը յիշեցնող մի տառ անգամ չեն մտցրել)։

Պ. Առաքելեան չը յարգելով թէ մանկավարժական և թէ խառն ժողովի որոշումը՝ յետ վերցնելու հասցրած վիրաւորանքը, զրկվեց ժողովներին մասնակցելու իրաւունքից (մայիսի 13-ին)։ Բայց ի վրէժառութիւն այս բոլորի, նա կարեց հանեց ցուցակների միջից իր առարկաների տարեկան թւանշանները։ Մասնակի բոլոր դիմումներին մերժումով պատասխանեց, մերժեց նաև խառն ժողովի պաշտօնական առաջարկը՝ ժամուկէս սպասեցնել տալով։ Մերժում ստանալով՝ խառն ժողովը հետևեալ ուլտիմատումը գրեց. «Յայտնել պ. Ա.-ին, որ եթէ վաղը՝ մայիս 20-ին չը յանձնէ թւանշանները, արձակված համարել պաշտօնից և զրկված ամառային ռոճիկից»։ Այս որոշումը նախօրօք իմանում են կողմնակի ճանապարհով և հետևեալ օրը առ. ժամը 5-ից ոտի կանգնեցնում և յուզում աշակերտութեան, մունետիկ կանչել տալիս և եկեղեցու զանգերը հնչեցնելով ժողովրդին ևս հաւաքում են մասնակից անել տալու աշակերտների ցոյցին։ Այս բոլորը աջող գլուխ բերելու համար ամենաեռանդուն գործունէութիւնը ցոյց տուեց Ռ. Կանայեանի ընտանիքը in corpore. առաւօտեան, պ. Առ., իր ներքին ուրախութիւնը թագցրած, եկաւ դպրոց, պաշտօնապէս լսեց իր մասին եղած որոշումը, նորից բացասական պատասխան տուեց և անցաւ յուզված աշակերտների միջով արտասուքը աչքերին, աւելի ևս յուզելու մանուկ ու փափուկ սրտերը։ 41-րդ խառն ժողովն, ուլտիմատումը վճռի փոխելով, ռոճկի հարցը թողեց հոգաբարձութեան, ի նկատի ունենալով որ մի որևէ մարմնի միջամտութեան դէպքում նա է պատասխանատու ճանաչվելու։ Հոգաբարձութիւնը իր 19-րդ նիստում, այս բոլորից յետոյ, որոշեց Ա.-ին լիովին տալ նրա ռոճիկը և առաջարկել, որ պ. Ա.-նը յետ տայ թւանշանները և իր առարկաների դասընթացի ծրագիրը։ Պ. Առ. նորից իր յաղառ եսն առաջ տարաւ, մերժեց, բայց հոգաբարձութեան նախագահից խիստ պահանջեց գրաւոր, որ «անմիջապէս» ուղարկեն իր ռոճիկը։ Այս բոլորից յետոյ թէ ում պիտի դատապարտի ընթերցողը, Երեանի փոխ-թեմակալը, ուսուցչական միութիւնը, թողնենք իրանց, պ. Աւդալբէգեան։ Աւելորդ չեմ համարում այստեղ մի համառօտ տեղեկագիր տալ մեր դպրոցի մասին, որից յետոյ պ. Աւդ. աւելի փաստեր կունենայ մեր «դպրոցի ամբողջ ուսումնական կեանքի և սրա հետ կապված մի քանի ուրիշ խնդիրների մասին» գրելիս։

Պարապմունքի օրեր եղել են 169, բաց են թողնվել 170 դաս, աւելի պարապել են 165, ուրեմն միայն 5 դաս է բաց մնացել։ Ունեցել ենք 45 մանկավ. և խառն ժողովներ։ Աշակերտ-աշակերտուհիների թիւը եղել է միջին թւով 320. սրանցից փոխադրվել են 53°/₀-ը, մնացել 25°/₀, վերաքննելի 18°/₀, արձակվել 3°/₀-ը։ Ամեն շաբաթ եղել են ընթերցանութեան ժամեր. տրվել են 5 փորձնական դասեր։ Տեղի են ունեցել աշ. գրական առաւօտներ և թատրոններ, մօտ 15 անգամ՝ աշակերտական զբօսանքներ։ Յօգուտ դպրոցի երեկոյթներ ու ներկայացումներ՝ 15 անգամ։ Եղել են նաև ծնողական, ծխական և հասարակական ժողովներ դպրոցում։ Ինչպէս ընթերցողը տեսնում է, եռուն կեանք է եղել դպրոցում, սակայն ուր կայ կեանք, այնտեղ կը լինեն և թերութիւններ, սխալմունքներ, մանաւանդ երբ պեդանտի աչքերով նայելու լինենք։ Մեռածները գերեզմանում ազատ են թերութիւններից. և իսկապէս պ. Աւդալբէգեան և իր դպրոցը չեն ունեցել սխալմունքներ ու պակասութիւններ... Իգդիրի դպրոցի բիւջէն այս տարի անցաւ 5500-ից. հաստատուն աղբիւր միայն 2500 հազիւ լինէր, մնացած 3000 ր. ծածկել է «զուտ տգէտ, բայց այնուամենայնիւ միշտ իրանց ոտները վերմակից աւել մեկնող ու անհամեստ կերպով գազ-գազ բրդող» հոգաբարձութիւնը իր եռանդով, դերասանութիւն, յուշարարութիւն անելով, բուֆետում ծառայելով և օգտվելով ամեն մի յարմար դէպքից։ Պ. Աւդալբէգեան, Իգդիրի պէս տեղում 3000 ր. բաց ծածկելը միայն մի մարդու բան չէ կարող լինել, և դուք ձեր աչքերը դիտմամբ կուրացրել էք՝ այդ հոգաբարձութեան ևս շնորհակալութիւն յայտնելու. բայց ես կարծում եմ, որ ձեր գովասանքը նրանց շատ խորը կը վիրաւորէր։ Պ. Աւդալբէգեան հրաւիրվել է Իգդիրմաւայի նման մի խեղճ գիւղի դպրոց ղեկավարելու. սակայն չոր պաշտօնական ժամերից դատ ինչո՞վ է կապված եղել նա դպրոցի և նոյն գիւղի ժողովրդի հետ։ Գէթ մի անգամ այցելէր այն գիւղը, անցնէր փողոցներով, տեսնէր այն խրճիթները, ուր ապրում ու մնվում են իր խնամքին յանձնված սանիկները. (դպրոցը գիւղից՝ դուրս Իգդիրին մօտիկ է գտնվում, իսկ պարոնը ապրում է Իգդիրում)։

Գրեցէք մեր մասին, ընթերցողներ էլ կունենաք. բայց լաւ կը լինէր նախ ձեր աչքի գերանը հանէիք և ապա մտածէիք ուրիշի աչքի շիւղի մասին։

Յաբէթ Խաչատրեան

—

Բագու, 20 մայիսի

Նաւթային հրատապ ժամանակին՝ Բագւում հիմնվեց «Որոտան» ընկերութիւնը։ Նախկին մի մասնաւոր ընկ. վերակազմվեց դարձաւ մի մեծ նաւթային արդիւնաբերող ընկ., որի հիմնադիրները բաց թողին մի քանի հազարի բաժիններ, որոնք իսկոյն և եթ սպառվեցին։

Ընկերութեան անդրանիկ ժողովում երբ քննվում էր ընկերութեան, այսինքն հիմնադիրների կազմած պայմանագիրը, բաժնետէրերը, որոնք բաղկացած էին մասնաւոր հասկացողութիւնից շատ զուրկ անձնաւորութիւններից, ծրագիրը իրաւական տեսակէտից քննելը ժամանակի կորուստ էին համարում. բաժին վերցնողը մտածում էր ոչ մի բան չը խնայել բաժինների թիւը աւելացնելու և ոչխարային միամտութեամբ իրան սիրտ էր տալիս՝ «ուրիշներինն ինչպէս, իմն էլ՝ այնպէս»։

Տարիներ անցան. բաժնետէրերը գոհ էին, որ՝ դիվիդենտ «յաւելեալ» բաժիններ ստանում էին։ Ժողով է։ «Որոտանի» հիմնադիրները յայտարարում են, որ իրանք՝ ամենակարող ղեկավարները, ըստ պայմանագրութեան (ի հարկէ առանց բաժնետէրերի կամքը հարցնելու), «Որոտան» ընկերութիւնը վաճառել են մի նոր, այն է՝ «Արալօ-Կասպիական» նաւթ. ընկերութեան։ Այստեղ հարկ է ասել, որ «Որոտան» ընկերութեան հիմնադիրները միևնոյն «Արալօ-Կասպիական» ընկերութեան հիմնադիրներն են։ Այդ պարոնները Կիսլօվօդսկի հիւրաքանչ վայրերում իրար մէջ, բացի մէկ հիմնադիրից, համաձայնութիւն են կայացրել և նոտարական ձևակերպութիւնը վերջացրել են, այսինքն «Պօղոսի տղայ Պետրոսը ծախել է Պետրոսի հօր՝ Պօղոսին»։ Թէև ընդհանուր ժողովի ժամանակ յիշեալ խռոված մի հիմնադիրը առարկեց, որ ինքը համաձայն չէ միւս ընկերների հետ, բայց յետոյ նրան համոզեցին։

«Որոտանը» ունէր «Արամազդ» ընկերութեան մէջ յայտնի բաժին։ «Որոտանը» «Արամազդից» ստացաւ իր բաժինը ակցիաներով և բաժանեց իր անդամներին, բայց 15,000 ր. ստացած մնացորդ դրամը մնաց անյայտութեան մէջ։ Յետագայ ժողովներում այդ 15,000-ի համար հարց դրվեց, բայց դա էլ մնաց հարց։ «Որոտանը» մկրտվեց և վերակոչվեց «Արալօ-Կասպիական», և բաժնետէրերն ստացան օգտի հաշւին ամեն մի բաժնին՝ մէկ «Արալօ-Կասպիականի» բաժին և «Որոտանի» բաժնի վճռած գումարը մասամբ, այն է ընդամենը 242 ր. 10 կօպ.։ Այն ինչ՝ եթէ ի նկատի ունենանք, որ «Որոտանը» ունէր 2560 բաժին, իսկ «Արալօն» 3000 բաժ., այն ժամանակ հարկ կը լինի հարցնել, թէ ո՞ւր մնացին 440 աւելորդ ակցիաները, որոնք եթէ վերածելու լինենք նշանակված արժէքներին, այս է՝ 250 ր. × 440 բաժ. = 110,000 ր. + 15,000 ր. «Արամազդի» մնացորդը, կը լինի 125,000 րուբլու մի կլորիկ գումար։

Ահա այդ 125,000-ի թիւրիմացութիւնը իրարանցումն է ձգել «Որոտանի» մի որոշ բաժնետէրերի շրջանում, որոնք չը կարողանալով բաւարար բացատրութիւն ստանալ՝ տեղական «Баку» և «Каспій» լրագիրներով բացատրութիւն պահանջեցին, տալով նրանց որոշ ժամանակ՝ հրապարակով բացատրութիւն տալու։

Որոշ ժամանակը վաղուց է անցել, բայց մեր պոկից ծաղկած հիմնադիրները և ժողովից ընտրված հաշւետես քննիչ յանձնաժողովը լռութեան են մատնվել, չեն ցանկանում կամ արհամարհում են թիւրիմացութիւնը հրապարակով լուսաբանելու։

Շուտով գալիս է «Որոտանի» վերջին մասնավճարի—82 ր. 10 կ.—ստանալը։ Դրանով պիտի փակվի ընդմիշտ «Որոտանի» գոյութիւնը, հետևաբար նաև բողոքի իրաւունքը։ Այդ ի նկատի ունենալով, լրագրով բողոքներն զգուշացնում են բաժնետէրերին, որ չը վազեն վերջին մասն ստանալու և բողոքողներին միացնելու համար հասցէ է թողնված թէ տեղական և թէ ոչ-տեղական բաժնետէրերի համար՝ Բագու Լ. Տէր-Նիկողոսեանցի խանութում։

Գողթնեցի

—

Թիֆլիս, 24 յունիսի

Հանգուցեալ հօրս՝ Սարգիս Աթանասեանի կտակով բարեգործական նպատակների համար իմ տրամադրութեան ներքոյ թողնված գումարից յատկացնում եմ 50 րուբլի յօգուտ Ալէքսանդրօպօլի հեղեղից վնասված աղէտեալների և ուղարկելով ձեզ այդ գումարը՝ խնդրեմ հասցնել ըստ պատկանելոյն։

Սիմէօն Աթանասեան

—

Թիֆլիս, 13 յունիսի

Կարդալով «Մշակ» լրագրի 125-դ համարում զետեղված «Կովկասի հայոց դպրոցների դասատուների միութեան ընդ. ժողովը» խորագիր կրող յօդուածը, որի վերջին մասը վերաբերում է ինձ և որը աղաւաղված է և ի վնաս ինձ լուսաբանված,—գալիս եմ սոյն բացատրութեամբս ճշմարտութիւնը վերականգնել։

Յօդուածագիրը արդարացնում է պ. Աւետեանին, սակայն վերջինս առանց արդարանալու փախուստ տուաւ մեղաւոր կէտերին պատասխանելուց և մի քանի ծամծմված ու բանսարկու խօսքեր իմ հասցէին շպրտելուց յետոյ՝ իր մեղքը ձգեց վարչութեան անդամների վրա, առարկելով թէ նրանք են իրան ուղարկել. իսկ պ. Աւետեանի՝ վարչութեանը ուղղած մեղադրանքից յետոյ, վերջինիս անդամները գոնէ մի քանի խօսքով չարտայայտեցին, որ իրանք պատասխանատու չեն պ. Աւետեանի մեր դպրոցում կատարած ապօրինի և անարդար քննութեան և վերջինիցս դուրս բերած սխալ եզրակացութեան համար։ Ինձ համար, ի հարկէ, միևնոյն է՝ պ. Աւետեանն է մեղաւոր, թէ՞ նրա հետ մեղաւոր է նաև վարչութիւնը. թող քննէր ընդհանուր ժողովը և պարզէր, թէ ինչ իրաւունքով իմ դէմ այդպիսի յանցանք են գործել։ Յօդուածագիրը ընթերցողին ներշնչել է տալիս պ. Աւետեանի վարմունքը արդարացի և ընդհանուր ժողովի բռնած դիրքը դէպի ինձ կանոնաւոր, ապա շարունակում է գրել. «Երկար վիճաբանութիւնից յետոյ նախագահը հարցը սպառված է համարում». բայց սոյն տողերով յօդուածագիրը չէ պարզում, թէ ինչի՞ շուրջն էր պտտում վիճաբանութիւնը և թէ ինչը լուսաբանվեց։ Այդ առիթով այսքանը կասեմ միայն, որ վիճաբանութիւնը առաջացաւ հետևեալ հարցի շուրջը. ժողովականների մի մասը առաջարկեց՝ կազմել մի քննիչ յանձնաժողով և ներկայացնել բողոքս նրան ի քննութիւն։ Իսկ ինչ վերաբերում է վարչութեան անդամ Արշ. Մեհրաբեանի բանաձևին, չը քուէարկվեց. և հէնց այդ բանաձևի մէջ յիշած հեղինակաւոր ծխական ժողովին յանցանքի մէջ է ձգել այն կենտրոնական վարչութեան «ապօրինի ժողովը», որի դէմ էր և իմ բողոքը։

Ընդհանուր ժողովի անդամները մօտ 24 էին, որոնցից առնուազն 10 հոգի վարչութեան անդամներ էին. հէնց ժողովի սկզբին պ. Աւետեանը և վարչութեան անդամները ամեն ջանք գործ դրին բողոքս իսպառ հանել օրակարգից և չը քննել. այդ նպատակին հասնելու համար կազմեցին յայտարարութիւն, որով ցանկանում էին բողոքս դուրս հանել օրակարգից։ Այդ յայտարարութեան տակ 15 հոգի ստորագրողները բոլորն էլ, բացի մի քանիսից, վարչութեան անդամներ էին, իսկ այդ մի քանի անդամներն էլ զանազան կապերով նրանց հետ կապված անձնաւորութիւններ են. չը նայած որ ժողովը որոշել էր, որ վարչութեան անդամները վճռական ձայնով մասնակցութիւն չը պիտի ունենան իմ բողոքիս վերաբերմամբ, բայց, իմ պահանջմամբ երբ նախագահը կարդաց ստորագրողների անունների ցանկը, պարզվեց, որ ստորագրողների մեծագոյն մասը վարչութեան անդամներն էին. թէև ես նորից այդ արարմունքի դէմ բողոքեցի, սակայն իմ բողոքը ոչ թէ միայն «ձայն բարբառոյ յանապատի» մնաց, այլ և նախագահը վաւերացրեց այդ յանցանքը, յայտնելով որ ինքն էլ երկու ձեռքով կը ստորագրէ այդ յայտարարութեան. այս հանգամանքը և վերոյիշեալ արձանագրած ճշգրիտ փաստերը դրդեցին ինձ արտայայտելու զայրոյթս և բողոքս ստորագրողներին, և իսկապէս տեղին էր նրանց յանցանքի համեմատ, որի համար պահանջեցին ինձանից՝ կամ ներողութիւն խնդրելով մնալ անդամ և կամ հակառակ դէպքում հեռանալ անդամութիւնից։ Իմ բողոքս կանոնադրութեան սկզբունքները խախտող Աւետեանի և կենտրոնական վարչութեան դէմ էր, որոնք վեր պահելով իրանց անձնական շահերը՝ ոտնակոխ տուին կանոնադրութեան սկզբունքները, չուզեցին, որ քննվի բողոքս, իրանց յանցանքը ծածկելու համար. ներողութիւն ես չէի կարող խնդրել. այդ կը նշանակէր մեղաւորի ճակատը համբուրել, նրա յանցանքների համար, մաշալլա ասել կանոնադրութեան սկզբունքները խախտողներին։ Այո, ես ուրախութեամբ հեռացայ այդ մարդկանց ընկերակցութիւնից, մնալով հաւատարիմ կանոնադրութեան ոգուն. մեղաւորները մնացին յանցաւոր, իսկ ես կանոնադրութեան հիման վրա ճշմարտութիւն պահանջող. ո՞վ մնաց միութեան անդամ, ո՞վ ում պէտք է նախանձէ. թող դրան պատասխանեն կանոնադրութեան իսկական ոգուն համապատասխան անդամները։

Թանգօյեան դպրոցի ուսուցիչ՝
Ղ. Տէր-Սարգսեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԵՐԸ ԵՒ ՊԱՐՍԿԱԿԱՆ ՄԵՋԼԻՍԸ

«Նոր-Ջուղայի Լրաբեր» թերթում կարդում ենք, որ վերջերս մէջլիսում քննվել է այն հարցը, թէ արդեօք պէ՞տք է թոյլ տալ Պարսկաստանի հայերին ունենալ իրանց պատգամաւորները մէջլիսում։ Առաջ ենք բերում մէջլիսի նիստը այդ հարցի առիթով։

Ասադօլլահ-Միրզա.—Խնդիրներից մէկը, որ ուղղված է մէջլիսին և որի պատասխանն անշուշտ պիտի տրվի, այն է՝ որ Բագրատ վարդապետ՝ Պարսկա-Հնդկաստանի թեմի առաջնորդական փոխանորդը խնդրագրով Սպահանից դիմել է, որ մի կամ երկու պատգամաւոր մէջլիսի անդամակցութեան համար ընտրվեն հայերից։ Արդեօք այդ պատասխանը տրվե՞ց թէ ոչ. հակառակ պարագայում անհրաժեշտ է որ ուղարկվի։

Աղա-Հաջի-Սէիդ-Նասրօլլահ.—Պատասխանը պիտի հետևեալ բովանդակութեամբ լինի. «Որովհետև այս նստաշրջանի ընթացքում հայերի իրաւունքը մեզ է յանձնված եղել և ժամանակամիջոցը լրանալու վրա է, ուստի խնդիրն Աստուծով պիտի յետաձգվի մինչև միւս նստաշրջանը։

Ադիբ-օ-Թօջար.—Խալիֆին (վարդապետին) պիտի պատասխանենք, որ հայերն իրանց կողմից մի պատգամաւոր ընտրելուց յետոյ պիտի ուղարկեն նրան գաւառական անջումանը։ Նախկին պատասխանն էլ այդպէս է եղել։

Հաջի-Սէիդ-Աբդօլ-Հօսէյն Շահշահանի.—Պիտի պարզվի, թէ արդեօք հայերն ու հրէաները իւրաքանչիւր իր կողմից պատգամաւոր պիտի ունենա՞յ, թէ միայն հայերին կը վերապահվի այս արտօնութիւնը։ Օրինակի համար, հրէաները Սպահանում մի առանձին թաղ են կազմում. նրանք էլ իրաւունք ունե՞ն մասնակցելու թէ ոչ։ Սոյն խնդիրը պիտի լուսաբանվի։

Բահր-օլ-Օլում.—Երկու ազգերն էլ իրաւունք ունեն պատգամաւոր ընտրելու, յատկապէս հայերը, որոնք Իրանի հին ազգերից մէկն են կազմում։ Սակայն այս խնդիրը կայ, որ հայերը սկզբից իրանց ձայնն ու իրաւունքը մեզ յանձնեցին. հակառակ դէպքում իրաւունք ունէին պատգամաւոր ընտրելու։

Մօխբէր-օլ-Մօլք.—Այս վիճաբանութիւնն ընտրութեան կանոնադրութեան մասին տեղեկութիւն չունենալուց է առաջ գալիս։ Ընտրութիւններն երկու տեսակի են. առաջինը՝ մարդահամարի հաշւով է, այսինքն 100,000 կամ 50,000 հոգուց գոնէ մէկն ընտրվի, և կարծում եմ՝ որ պարսկահայերի թիւը 50,000-ից աւել չի լինի։ Այս դէպքում, Թէհրանի և այլ տեղերի հայերը մի հոգու պիտի ձայն տան, սակայն առայժմ այս բանը չէ աջողվել և դժուարութիւններ կը հանդիպի։ Գալով միւս եղանակին, պիտի ասեմ, որ մեր կանոնադրութեան մէջ երբեք կրօնի խտրութիւն չէ դրվել։ Իւրաքանչիւր դասակարգ, ինչ կրօնի էլ որ պատկանելիս լինի, ձայն ունի ընտրութիւնների ժամանակ. զօր օրինակ, հայ վաճառականները՝ վաճառական դասակարգի հետ։ Եթէ հայերը մասնակցէին և իրանց իրաւունքը չը յանձնէին, հաւանական էր որ ձայների մեծամասնութեամբ տասն հոգի վաճառական պատգամաւորներից մէկն էլ հայ լինէր։

Ասադօլլահ Միրզա.—Բարձրապատիւ վարդապետի նամակի նպատակն այս է, որ Ջուղան մի առանձին պատգամաւոր ունենայ։ Մի կողմից ևս պարսկահայերի թիւը, 80,000-ից մինչև 100,000-ի կը հասնի, և մարդահամարի հաշւով իրաւունք ունեն մի կամ երկու հոգի ընտրելու։ Որովհետև այս նստաշրջանի ընտրութիւնը դասակարգային հաշւով է, նրանք էլ համարվում են իբրև մի դասակարգ և իրաւունք ունեն պատգամաւոր ընտրելու։ Խօսքս այն չէ, որ հէնց այժմ նրանց ընտրելու իրաւունք տրվի։ Հայ հասարակութիւնը վաճառականական և ուրիշ գործերում իր ջանքերը չէ խնայել և պատրաստ է եղել ամեն տեսակ ծառայութիւններ մատուցանելու պետ[illegible]թեան ու ազգութեան. այս[illegible] [illegible]են կատարեալ պա[illegible] քանն եմ խնդրում, որ [illegible]եալի [illegible]տասխան տրվի մէջլիսի կողմից, որը [illegible] միամտվեն։

Աղա-Միրզա-Մահմուդ.—Նորին բարձրութեան ասածը կարիք չունէր այնքան երկարաբանութեան և, ինչպէս որ Հաջի-Սէյիդ Նասրօլլահն է յայտնել, պիտի պատասխանենք, որ այս նստաշրջանի ընթացքում իրանց իրաւունքը յանձնած են եղել, այլ ևս իրաւունք չունեն։

Աղա-Սէիդ-Հասան Թաղիզադէ.—Ես համակարծիք եմ Ասադօլլահ-Միրզայի հետ։ Հայոց վարդապետի ասածը, որը վերաբերում է Պարսկա-Հնդկաստանի թեմի ժողովրդին, և ոչ թէ Ատրպատականի, որ առանձին առաջնորդի հովուութեան ներքոյ է, ուղիղ է։ Ինչպէս որ կանոնադրութեան մէջ գրված է, նրանք ևս իբրև Պարսկաստանի մի ժողովուրդ ձայնի և ընտրութեան իրաւունք ունեն, և թերևս ըստ դասակարգային կարգադրութեան՝ նրանց աւելի համակրանք է ցոյց տրվել, որովհետև կրօնի խտրութիւն չէ դրվել։ Արդ՝ մի պատասխան, համաձայն ազգային ու քաղաքական օրէնքների, պիտի տրվի, և նկատի ունենալով որ այս շրջանի ընտրութիւնները մարդահամարի հաշւով չեն եղել, ուստի նրանց պատգամաւոր ընտրելու իրաւունք չէ տրվել։ Բացի այդ, վերջերս Միացեալ-Նահանգներում ապրող հայերի կողմից մի նամակ է ուղարկվել մէջլիս, որ եթէ նախագահական յանձնախումբը յարմար գտնի, կը կարդացվի մէջլիսում ի տեղեկութիւն յարգելի անդամների։ Այդ նամակով հայերն իրանց աջակցութիւնն ու ազգասիրութիւնն են հանդէս բերում և պատրաստակամութիւն յայտնում, որ, եթէ հարկը պահանջի, 1000 հոգի Միացեալ-Նահանգների զինուորական տարազով և 10 թնդանօթով, ամենայն անձնազոհութեամբ պաշտպանեն Իրանի զանազան սահմանագլուխները։ Այս տեսակ ցանկութիւններ որ յայտնում են, արժէ հետևեալ ընտրութիւններին պատգամաւոր ընտրելու իրաւունք տալ նրանց։

Հաջի Սէիդ-Նասրօլլահ.—Այո, նամակը

բովանդակութիւնն այնպէս է, ինչպէս որ ասվեց։ Ցիրաւի չափազանց աջակցութիւն են առաջարկում, չը նայելով որ, փառք Աստուծոյ, դեռ կարիք չենք զգում, սակայն բաւականաչափ ուրախութեան պատճառ է լինում այդ նամակը։

Հասան-Ալի խան.—Ուզում եմ յայտնել, որ հակառակ կանոնի ենք վիճաբանում։ Մենք արդէն որոշել ենք, որ երբևիցէ նամակ կամ գրութիւն ուղարկվի մէջլիսի անունով՝ նախագահական յանձնախմբի հաւանութեամբ պիտի կարդացվի ժողովում և քննութեան ենթարկվի։ Արդ՝ այն նամակն որ քանի ժամանակ առաջ ստացվել է, լաւ կը լինի յանձնախմբի կողմից ժողովը բերվի, և կանոնաւորապէս վիճաբանութիւն կայանայ նոյն խնդրի առիթով։

Մօխբէր-օլ-Մօլք.—Իմ նախկին ասածներից չը պէտք է եզրակացնել, որ ես ցանկանում եմ հայերին՝ իրաւազուրկ լինեն։ Ես ասացի, որ ընտրութիւններն երկու տեսակի են, Դասակարգային ընտրութիւնը, որով ցայժմ ղեկավարվել ենք, դաւանութեան խտրութիւն չէ դնում, և ամեն մի անհատ ինչ ազգութեան էլ լինի՝ կարող է մասնակցել։ Այն հարցը, որ հրապարակի վրա դրվեց թէ պարսկահայերի թիւը 100,000-ի է հասնում, և իրաւունք տրվի 2 հոգի ընտրելու՝ իմ կարծիքով, դժուարութեան կը հանդիպի, որովհետև բոլոր հայերը պիտի միաբանվեն և մի կարգադրութիւն մշակեն։ Ջոր օրինակ, պիտի համաձայնվեն որ իրանց առաջնորդը մի կամ երկու հոգի ընտրի։ Ինչ վերաբերում է դասակարգային ընտրութեան՝ արդէն ասվել է։

Խայեաթ-Բաշի.—Իլիաթների ներկայացուցիչների մասին քանիցս յիշողութիւն է եղել մէջլիսում, լաւ կը լինի կոչվեն։

Նախագահ.—Դեռ այս հարցը թող վերջանայ, յետոյ կը դառնանք այդ խնդրին։

Վաքիլ-օ-Ռրայեա.—Ընտրութեան ժամանակ հայերն անփոյթ են վարվել և իրաւունքը յանձնել են։ Ապագայում իրաւունք ունեն պատգամաւորներ ընտրելու դասակարգային կանոնի համաձայն։ Բացի դրանից, այժմս էլ հնարաւոր է, որ իրանց կողմից մի հոգի ընտրեն և ճանապարհ ձգեն։

Աղիբ-օ-Թօջար.—Այն ժամանակ, երբ ուզեցի դասակարգային ընտրութիւն կայացնել, յատկապէս յայտարարեցի, որ զանազան դասակարգերն, այսինքն՝ կրօնաւորները, կալուածատէրերը, վաճառականներն ու արհեստաւորները գործը սկսին, և հայերն էլ սոյն դասակարգերից են, սակայն մասնակցութիւն չունեցան։ Ի նկատի ունենալով, որ վարդապետը սահմանադրութեան օրերում շատ նեղութիւններ է կրել, ինչ փոյթ, եթէ մի պատգամաւոր ընտրելու իրաւունք տրվի։

Հաջ-Մօյին-օ-Թօջար.—Եթէ մի հոգի ընտրելու իրաւունքը նրանց տրվի, մի տեսակ խտրութիւն առաջ կը գայ, որովհետև ուրիշներն էլ կարող են նոյն բանը խնդրել. դասակարգային ընտրութիւնը հէնց նրա համար է, որ իւրաքանչիւր դասակարգ կարողանայ մասնակցել։ Այժմս, որ Սպահանի պատգամաւորների թիւը մէկով պակասում է, փոյթ չունի եթէ հայերն էլ ներկայանան ու քուէ տան և, եթէ ի դէպ ձայների մեծամասնութեամբ նրանցից մէկն ընտրվի թող ճանապարհ ձգեն։

Վաքիլ-օ-Թօջար. — Քաղաքակրթական ու ազգային իրաւունքների մէջ խտրութիւն չէ դրվել, և այս վիճաբանութիւնն այժմ աւարդիւն է։ Եթէ ապագայի համար է, ուրեմն այժմ անօգուտ է, և եթէ այժմեան համար է, Թէհրանի և մի քանի տեղերի հայերին յայտարարվեց, սակայն իրանց իրաւունքը յանձնել են. իբրև այս դրութեամբ այժմեան վիճաբանութիւնն օգուտ չունի և ապագայում ևս կանոնադրութեան համաձայն պիտի ընթանան։

Ասադօլլահ-Միրզա.—Վիճաբանութիւնն երեք կէտերի վրա հանգաւ։

ա) Հաջի Մօյին-օ-Թօջարն ասաց, որ եթէ առանձնապէս նրանց իրաւունք տրվի, բարդութիւն առաջ կը գայ, սակայն կարծում եմ, որ այդ բանն առիթ կը տայ մերձեցման ու միութեան, որովհետև բոլոր ցեղերն, այսինքն մահմեդականները, հայերն ու հրէաները նոյն երկրում միաբան են ապրում և նոյն ջրից են օգտվում։

բ) Գալով Հօսէյն-Ղուլի խանի ասածին, որ կանոնին հակառակ ընթացք է եղել, պիտի յայտնեմ, որ եթէ մի այդպիսի բան է պատահել, պիտի վերագրել նախագահական յանձնախմբին։ Ես իբրև մի պատգամաւոր, տեսնելով որ այդպիսի մեծ ու հայրենասէր մարդու կողմից ուղարկված նամակը մի միջոց է և անպատասխան է մնում, ասացի՝ գոնէ մի ժողովում վիճաբանութեան ենթարկվի։

գ) Ինչ վերաբերում է այն հարցին, թէ նրանց կողմից մի հոգի ընտրելը դժուարութիւն կարող է ունենալ՝ պիտի յայտնեմ որ, համաձայն տեղեկութեան, կարծես թէ մի հոգի աչքի առաջ ունեն. և թւում է ինձ, որ եթէ այսօր էլ թոյլտուութիւն շնորհվի, վաղը նրանց պատգամաւորն այստեղ պատրաստ կը լինի։

Աղա-Սեիդ Հօսէյն.—Արբաբ Ջամշիդը դասակարգերի շարքերից ընտրվեց և ոչ կրօնական տեսակէտից և նրանց պատասխանը այս պիտի լինի, որ եթէ դասակարգերի ընտրութեան ժամանակ ձայների մեծամասնութեամբ ընտրվին, խօսք չը պիտի լինի։ Բացի դրանից, Ռաշտի և այլ տեղերի հայերին յայտարարվեց, որ պատրաստվեն. սակայն այժմ ժամանակն անցել է. ապագայում ևս եթէ ընտրութիւնը դասակարգային լինի, այդ ուղղութեամբ պիտի ղեկավարվին, իսկ եթէ մարդահամարի հաշւով է՝ նրանց անելիքը կը պարզաբանվի։

Հաջ Մօյին-օ-Թօջար.—Կարծես թէ նորին բարձրութիւն՝ Ասադօլլահ-Միրզան սխալվել է։ Իմ նպատակն այն չէ որ նրանք ընտրութեան և քուէարկութեան իրաւունք չունենն, այլ այս է, որ եթէ նրանք մի ցեղ են, ցեղեր շատ կան, և այս առիթ կը տայ յուզման և խտրութեան։ Եթէ ընտրութիւնը դասակարգային է, ուրեմն նրանք էլ մասնակցեն, և եթէ այժմ նրանց իրաւունք տալու լինենք, պէտք է մի կանոնադրութիւն գրվի և առաջարկվի ժողովին քննադատութեան։

Նախագահ.—Լաւ կը լինի, որ այս խնդիրը յետաձգվի մինչև հինգշաբթի օրը, և ապա վերջաւորվի։

ԴԷՊՔԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

I

Ռաշտ, 15 յունիսի

Առաւօտեան ժամը 10-ն է։ Տեղիս զինւորները և կօզակները նահանգապետի տան առաջ պատրաստ կանգնած են։ Նահանգապետի հրամանով մունետիկը յայտարարում է ժողովրդին, որ մինչև ժամը 12-ը խանութները պիտի բացեն և իրանց գործերով զբաղվեն, հակառակ դէպքում իրանց գոյքը կը թալանվի։ Հայ խանութպանները բացին։ Ռուսաց բանկը փակ է։ Ժողովուրդը վախենում է և սարսափի մէջ է։ Խանութպանները անորոշ դրութեան մէջ են. երկու կողմից էլ վախենում են թալանի ենթարկվելուց։ Նահանգապետը բերել տուեց դատարան Հաջի-Մօին-էլ-Մմալէքին (անջումանի նախագահ), Հաջի-Միրզա-Ըզային, սէիդ Աբդուլ-Վահաբին (անջումանի անդամներ), որոնց բանտարկեց դատարանում, և անմիջապէս զօրքին և կօզակներին հրամայվեց ի կարգ։ Թնդանօթաձիգները եղած հնադարեան երկու թնդանօթները դուրս բերելով՝ դրին երեք գլխաւոր անցքերում։

Ժամը 12-ն է, բայց խանութները դեռ չեն բացվել։ Զինւորական փողը փչեցին, զինւորներն ու կօզակները զոյգ-զոյգ գնացին բազարի միջով՝ շրջապատելու անջումանը, որը գտնվում է Սաղրիսաղան թաղում։ Զինւորները տեղ հասնելով շրջապատում են անջումանը։ Որովհետև օրը կէս օր էր, այդ պատճառով ժողովուրդը ցրված էր անջումանի շէնութեան շրջակայքից, այնպէս որ անջումանում մնացել էին մօտ 100 հոգի։ Անջումանը շրջապատելու միջոցին ընդհարում չէ պատահել։ Քիչ անցնելուց յետոյ՝ կօզակների գլխաւոր միրփանջը մի հոգի կօզակ վերցնելով մտել է անջումանի ներսը և հանդարտ տոնով սկսել է հասկացնել հասարակութեանը, թէ ինքը երբէք չէ ցանկանում, որ արիւնհեղութիւն լինի, և խորհուրդ է տալիս լսել իրան և փակելով անջումանը հեռանալ այնտեղից, քանի որ անջումանը այլ ևս չը պէտք է գոյութիւն ունենայ մինչև մի որոշ ժամանակ... Այդ խօսակցութեան միջոցին մի թաւրիզեցի յանկարծ կրակել է կօզակի վրա և վիրաւորել նրան։ Այս տեսնելով միր փանջը, դուրս գտնվող զինւորներին հրամայում է համազարկ տալ, որից սկսվել է ընդհարումը։ Զօրքը, կօզակներն ու ոստիկանները սկսել են կրակել օդի մէջ և ուղղակի, մինչև որ բոլոր անջումանականները փախել են։ Հրացանաձգութեան միջոցին սպանվել և վիրաւորվել են երկու կողմից 12 հոգի։ Սպանվել է մի կօզակ և մի ոստիկան։ Անջումանականներից կայ սպանված 2 հոգի և վիրաւորված 8 հոգի, որոնց վէրքերն այնքան էլ թեթև չեն։ Անջումանում եղած իրերը զօրքը թալանի տուեց։

Խանութները թալանի չենթարկվեցին։ Խանութպանները կրակից երկիւղ կրելով՝ մինչև երեկոյ, որքան հնարաւոր եղաւ, իրանց խանութների մթերքները սայլակներով ու մշակներով տեղափոխեցին իրանց տները։

Ընդհարումը վերջանալուց յետոյ՝ զինւորները, վերադառնալիս, երբեմն օդի մէջ կրակում էին ժողովրդին վախեցնելու համար։ Երբ զինւորները հասան հայոց եկեղեցու փողոցի մօտ՝ սկսեցին ուռա կանչել և, միանգամից կրակելով օդի մէջ մօտ 50 անգամ, գոռալ «Կեցցէ Պարսկաստանի Մահմադ-Ալի շահն-շահը»։ Այդպէս օդի մէջ կրակելով հասան նահանգապետի բընակարանը։ Քաղաքը, կարծէք մոգական գաւազանի զօրութեամբ, խաղաղվեց անմիջապէս։

Երէկվայ դէպքը ժողովրդի վրա խորապէս ազդել է։ Այսօր, յունիսի 15-ին, առաւօտեան կանուխ արդէն սկսեցին խանութները բանալ։ Քաղաքը շատ հանգիստ է։ Ընդհարումի և սահմանադրութեան վերաբերեալ շատ զգուշութեամբ են խօսում, վախենալով ձերբակալվելուց։

Երէկ առաւօտեան Էնզէլի է հասել ռուսաց պատերազմական «Красноводскъ» նաւը, որն ուղղակի մտել է գետը և կանգնել է Ղազեանի մաքսատան և Էնզէլիի միջև։ Նաւն ունի 45 նաւաստիներ և մօտ 10 հատ մեծ ու փոքր թնդանօթներ։ «Գեօք Թափփէ» պատերազմանաւը մեկնել է Աշուրադէն։

Անջումանականների պարագլուխները փախել են։ Այսօր նահանգապետի մօտ էին եկել շնորհակալութիւն յայտնելու և շնորհակալական հեռագիր տալու Թէհրան՝ շահին՝ տեղիս նշանաւոր հոգևորականները, որոնց մէջ էր և յայտնի մուշտէիդ Հաջի Խումամին։ Վերջինս, որ մօտ մի ամիս առաջ հեռացել էր քաղաքից և գնացել էր իր կալուածքը, 2 օր առաջ վերադարձաւ։ Հաջի Խումամին տեղիս ամենաազդեցիկ մուշտէիդն է և կողմնակից է միապետութեան։

Պօստն եկաւ, սակայն առանց Թաւրիզի և Թէհրանի նամակների։ Ինչպէս երևում է, իշխանութիւնը արգելք է դրել նամակները յանձնելուն։ Ենթադրում են, որ իրերի դրութիւնը Թաւրիզում շատ խառը պիտի լինի։

Ռաշտեցի Ս.

II

Ուրմի, 10 յունիսի

Ասպատակիչների վայրագութիւնները մի քանի օր դադար էին առել։ Պարսիկ մասսան տրամադիր էր հաւատալ, թէ խաղաղութիւնը թագաւորեց, և սկսել էր շունչ քաշել։

Բայց խաղաղութեան թելը շուտ կտրվեց։ Ահն ու դողը, առն ու փախը անդրադարձաւ այն տեղերը և այն գիւղերը, որոնք թիւրքի հովանուն կամ հպատակութեանը չէին դիմել։

Մայիսի 21-ին քիւրդերը վրա են տալիս ասորաբնակ Քաւսի գիւղին։ Ջը նայած որ կատաղաբար դիմադրում է գիւղը, այնուամենայնիւ 10 տուն թալան և երեք վիրաւոր է տալիս։

22-ին նոյն վիճակին է ենթարկվում Թասմալու գիւղը։ Գիւղի որոշ մասը թալանվում և 2 հոգի էլ սպանվում է։

Ջեմ արձանագրում տասնեակ ուրիշ գիւղերի և ամբողջ գաւառի միշտ միօրինակ՝ ողբ կտրատող անցքերը։ Պատկերը միևնոյն է։

Հրոսակների արշաւախումբը 60 հոգուց պակաս թիւ չէ կազմում, իսկ երբեմն նոյնիսկ 2—300։

Բնորոշ է աւազակ խմբերի դասաւորութիւնը։ Դրանց մեծ մասը, կուռդները, կազմում են ձիաւոր և հետևակ, որոնք մի կէտի վրա կանգնած, նայած տեղին, մահառիթ գնդակներ են տեղացնում. մի ուրիշ մասը կացիններով և զանազան գործիքներով վինված, մտնում է գիւղը և տների դռները կոտրատում։ Երրորդ մասը՝ թոկերով տնային ապրանքները կապկապում, գրաստների վրա է բարձում, իսկ երբ չը կայ այդպիսին, շալակներով ինքն է տանում։

Աւազակներից նրանք, որոնք գիւղի որպիսութեանը և բնակիչներին ծանօթ են, հրոսակախմբերի շարքում պէտքական տեղն են բռնում։ Այդպիսիները, կատաղի դիմադրութեան հանդիպելու ժամանակ, գիւղի մարդկանց անուանական հասցէին սպառնագին խօսքեր են ուղղում չընդդիմանալ, եթէ ուզում են որ իրանց կեանքը [illegible]։

Նոր լուր բերին, որ քիւրդերը Հաջի Մուսադդգ-Սալթանէի և մի ուրիշ աղայի բեռնաբարձ ջորիները քշել տարել են քաղաքից մօտիկ հեռաւորութեան վրա։ Մի օր առաջ էլ յիշեալի եղբօր ջորիներն էին տարել։

Մակուի ձիաւորները, որոնք սահմանված են տեղական ազգաբնակութիւնը քիւրդական ասպատակութիւններից ու թալաններից պաշտպանելու, իրանց կատարած քսմնելի կողոպուտներով աւելի են վրդովում ազգաբնակութեան ատելութիւնը։ Այդ ձիաւորները ճանապարհների և կամուրջների այս ու այն կողմը կտրելով, երթևեկողների ձին, հրացանը, դրամն և ինչ որ պատահեց՝ խլում են։

Մի օրինակ։ Անցեալ օրը հայազգի Հայրապետ խանից, որ իր այգին է գնալիս եղել, Դէրա-Դէյրման չը հասած, հրացանը խլում են։ Հայրապետ խանը վերադառնալով քաղաք բողոքում է ուր հարկն է, բայց անօգուտ. վերջապէս ձիաւորների հրամանատար միրփանջին է դիմում բողոքելով և հրացանը խլողին մատնացոյց անելով ու պահանջելով իր զէնքը։ Նրան միայն թէ գնդակահար անելն էր պակաս մնացել։

Արգար Տէր Եսայեան

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

Ներքին

23 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ժուռնալիստների համագումարի երեկոյեան նիստում եղան վիճաբանութիւններ կոմս Տօլստոյի անունով թանգարան և տուն հաստատելու հարցի շուրջը։ Մայրաքաղաքի մամուլի ներկայացուցիչները գտան, որ տունը պէտք է ունենայ բացառապէս կուլտուրական կրթական նպատակ, նրա պահպանութեան միջոցները պէտք է ստացվեն մամուլի միջոցով ժողովարարութիւն անելով։ Գաւառական մամուլի ներկայացուցիչները գտան, որ տունը ունենալու է շահադիտական-արհեստակցական նպատակ, հանդիսանալով գրականագէտների արհեստակցական պահանջները միացնող մի կենտրոն. միջոցները պէտք է ստացվեն մայրաքաղաքի մամուլից, որովհետև գաւառական ժուռնալիստները այնպիսի հօնօրարներ չեն ստանում, ինչպէս մայրաքաղաքների ժուռնալիստները։ Առաջարկութիւնները համաձայնեցնելու համար կազմված է մի մասնաժողով։

ԽԱՐԿՈՎ։ Զոհված բանւորների ընտանիքներին վարձատրութիւն տալու համար հարկաւոր է մօտ կէս միլիոն րուբլի 271 հոգու համար։ Այս գումարի մի մասը կը տրվի Ռուսաստանի հարաւի լեռնահանքատէրերի համագումարի խորհրդից, որ յատկապէս գոյացված է մասսայական դժբաղդութիւնների ժամանակ զոհվածներին բաժանելու համար։

ՍԵՎԱՍՏՕՊՈԼ։ Արտասահմանից վերադարձաւ փոխ-ծովապետ Ցիվինսկու նաւախումբը։

Արտաքին

ԼՕՆԴՕՆ։ Անգլիական բանկը բացեց ստորագրութիւն իռլանդական հողային $^3/_4$%-ային փոխառութիւն 5 միլիոն ֆունտ գումարի։

ՀՌՕՄ։ Հրատարակված է պապի բիլլան դատարանի բարենորոգման մասին։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Ջ. Ի. ԲԱԲԱՍԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Ռ. Դ. ԱՒԻՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Ռ. ՏՈՒԼԻՆՈՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
Կին-բժիշկ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Ց. ԳՈՒՐԳԵՆՈՎ—12—12½ ժ. կանանց և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Ց. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Անցեալ տարիների նման ընդունում է հիւանդներին վեներական և մորթու ցաւերով Կիսլովոդսկում, հիւրանոց «Ռօսսիա»։
(ա. օ.) 100—74

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնն ամեն օր
Առաւօտեան ժամի 9 ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինովսկայա փողոց № 8.
(Ե. Հ. Չ.) 100—82

Վորօնեժի նահ. Ռօսսօշ աւանում ունեմ
ԱՄԵՆ ՏԵՍԱԿԻ
(բակալէյնի, գալանտերէյնի, երկաթեղէնի, մրգեղէնի և խմիչքեղէնի)
ԱՊՐԱՆՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄԵԾ ԽԱՆՈՒԹ,
որը կամենում եմ
ՎԱՃԱՌԵԼ
Ցանկացողները պայմանների մասին թող դիմեն ինձ հետևեալ հասցէով. Слоб. Россошъ (Ворон. губ.). Михаилу Александровичу Кеворкову.
(25, յուլ. 1, 15, 29, օգ. 3) 5—1

Լոյս տեսան և վաճառվում են՝
«Աւետիս Պօղոսեանի հրատարակչական ֆօնդի»
I
Մանկական գրադարանի № 2 գրքոյկը.
ՎԻԼՀԷԼՄ ՀԱՈՒՖ
ԻՆՔՆԱԿՈՉ ԻՇԽԱՆԸ
(պատկերազարդ)
Թարգմ. ռուս. օր. Շ. Տէր-Նիկողայոսեանց
Գինն է 10 կ.
II
Ժողովրդական գրադարանի № 1 գրքոյկը.
Լ. Ն. ՏՕԼՍՏՕՅ
«ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ»
Ա. պրակ
(Հեղինակի ծննդեան ութսունամեայ յոբելեանի առիթով)
Գինն է 30 կ.
Գրքերի պահեստը Թիֆլիս՝ «Գուտտենբերգ» գրախանութում։ 5—2

Գ.Գ.Դեալէրի տեխնիկական
գրասենեակը Պետերբուրգում
Невскій 164. Телегр. адр. „Техдилеръ".
Ամենաէժան ապրիլ ձեռք բերելու նոր և գործածութեան մէջ սակաւ եղող մեքենաներ, պղինձներ, լօկոմօբիլներ, կէր. և նաւթի ու գազի շարժիչներ, մօտօրային մակոյկներ, շոգենաւեր և մետաղներ։
Պահանջեցէք նախահաշիւներ.
(18, 22, 25, յուլ. 1, 11, 20, 30, օգ. 10, 20, 30) 10—3

Լոյս տեսաւ եւ վաճառվում է
«ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ»
(պատմական ուսումնասիրութիւն)
Խաչատուր Բաբայեանի
56 երես, գինն է 20 կոպէկ
Վաճառվում են նաև նոյն հեղինակի հետևեալ աշխատութիւնները.
1. «Բանաստեղծութիւններ» I հատոր, գինն է 50 կոպէկ և
2. «Վաղաժամ մահ», ողբերգութիւն 5 արարուածով, գինն է 1 րուբլի։
Դիմել Թիֆլիսի հայ գրավաճառներին և հեղինակին հետևեալ հասցէով.
Тифлисъ, учителю Х. Бабаяну. Пушкинская улица, № 11.
Գումարով գնողներին 30 % զեղչ
(Հ. Կ.) 5—3

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
Ընդունում է
Ներքին եւ ջղային
հիւանդութիւն ունեցողներին
Պեատիգորսկում, Վերխի բուլվար № 14, տ. իշխ. Գիրէի. Пятигорскъ, Верхній бульваръ, д. кн. Гирей. 30—18

ՅՈՒԼԻՍԻՆ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ
Ստ. Լիսիցեանի, Յովհ. Թումանեանի եւ Լ. Շանթի
ԿԱԶՄԱԾ
ԼՈՒՍԱԲԵՐ
ՀԱՅԵՐԷՆԻ ԴԱՍԱԳԻՐՔ
Երկրորդ տարի Գինը 45 կ.
Առաջին տարի Գինը 30 կ.
Գլխաւոր պահեստ Թիֆլ. «ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ» գրավաճառանոցում
Тифлисъ, книжный магазинъ „Гуттенбергъ"
Բաքու «Сотрудникъ»
(օ. մ.) 10—2

КАВКАЗСКІЯ МИНЕРАЛЬНЫЯ ВОДЫ:
Министерство Торговли и Промышленности.
НАТУРАЛЬНЫЯ СТОЛОВЫЯ ВОДЫ:
„НАРЗАНЪ" Кисловодскъ.
„ЕССЕНТУКИ" № 20
Продажа вездѣ. ● Главный складъ въ Пятигорскѣ.
ПРЕЙСЪ-КУРАНТЫ БЕЗПЛАТНО.
(17, 25, 2, 9) 82,038 27—6

Типографія „Экономія" Ав. Мугдусіакопова съ С-ми. Большая Ванкская ул. № 3.